Գիտություն

ՀՈՒՆՎԱՐ
№1 (165)
2004թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՍԱՂԹԱՆՔՆԵՐ

Հարգելի հայրենակիցներ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցներ: Նորից եկավ ձմեռը և, բնականաբար, Նոր տարին:

Մենք հրաժեշտ ենք տալիս 2003 թվականին, մի տարի, որը մեզ համար հոբելյանական էր: Գիտությունների ազգային ակադեմիան դարձավ 60 տարեկան, տարիք, որ հասունության ու իմաստության շրջան է: Ակադեմիան, որի հիմքը դրվեց համաշխարհային պատերազմի թեժ տարիներին՝ 1943-ին, կանխորոշեց Հայաստանի հետագա զարգացումը, որպես առաջադեմ գիտության նվաճումների հիման վրա զարգացած արդյունաբերության և գիտության հանրապետություն: Այդ իմաստով հնարավոր չէ անտեսել կամ նվազեցնել Գիտությունների ակադեմիայի դերը մեր կյանքի բոլոր ոլորտներում: Այսօր մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ ակադեմիան բարձր է պահել հայ գիտության վարկը, եղել է և մնում է ավանդույթների կրողն ու շարունակողը: Սա այն բնագավառն է, երբ մենք կարող ենք հպարտանալ ոչ միայն նրա փառավոր անցյալով, այլև հայ գիտության այսօրվա բարձր վարկով:

Գիտության բարձր մակարդակը հիմք հանդիսացավ կյանքի բոլոր ոլորտների առաջընթացի համար՝ Հայաստանը դարձնելով զարգացած արդյունաբերության, ժամանակակից տեխնոլոգիաների երկիր: Անկախության անցած տարիներին մենք հաղթահարեցինք ոչ միայն ճգնաժամն ու գիտությանը վիճակված նյութական դժվարությունները, այլև այդ տարիների գիտության անհարկի, չարդարացված անտեսումը:

Մեզ նոր հեռանկարներ են սպասում: Շարունակենք հայ գիտության փառավոր ուղին, նոր բարձունքների ու նվաճումների հասցնենք հայ միտքը:

Շնորհավոր Նոր տարի, բարեկամներ, խաղաղություն և լավ տրամադրություն ձեր բոլորի հարկի տակ:

Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ

Ամերիկացիները ուսումնասիրում են Յուպիտերը՝ եվրոպացիները՝ Մարսը

Ամերիկյան «Գալիլեյ» մոդուլը, որը 1995-ի դեկտեմբերին արձակվեց Յուպիտերի մթնոլորտը ուսումնասիրելու համար, 2003 թվականի սեպտեմբերի 22-ին ուղղվեց դեպի Յուպիտեր: Այն կանցնի մոլորակը պարուրող անթափանց մթնոլորտը, տեղեկություններ կհաղորդի հանելուկային մոլորակի մթնոլորտի բաղադրության մասին և ընդհուպ կմոտենա նրա մակերևույթին: Դրանով գիտությունը նոր քայլ կկատարի արեգակնային համակարգի մոլորակների ուսումնասիրության գործում, որը կարևորվում է նաև նրանով, որ Յուպիտերը լինելով մեր համակարգի ամենամեծ զանգվածն ունեցող մոլորակը, դարձել է մետեորիտների և արեգակնային ճառագայթման թիրախը և յուրահատուկ փրկիչ պատնեշ է երկիր մոլորակի համար: «Գալիլեյի» ճանապարհորդությունը անցնող տարվա տիեզերագիտության կարևոր նվաճումը կդառնա... Իսկ եվրոպացիների թիրախը Մարսն է: Ռուսական հրթիռով Բոյկանուրից արձակված Եվրոպական մոդուլը կիջնի Մարսի վրա և կուսումնասիրի նույնիսկ մոլորակի ընդերքը:

ՀՈԲԵԼՅԱՆ

Գիտությունների ազգային ակադեմիան 60 տարեկան

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան 60 տարեկան է: Մինչդեռ հայ գիտական միտքը հազարամյակների պատմություն ունի: Մեծամոր, Գլաձոր, Վեներիկ ու էջմիածին: Սրանք սկիզբն են, հայ գիտական մտքի պատմությունը:

Բայց ահա 2003 թվականի հոկտեմբերին Հայաստան ժամանեցին շատ գիտնականներ մոլորակի տարբեր գիտական կենտրոններից՝ նշելու Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի 60 տարին:

Հազարամյակներ ու... 60 տարի: Խոսելու, քննարկելու, հիշելու շատ բան կա: Հյուրերը Հայաստանի գիտնականների հետ գնահատում են անցյալը, նշում այսօրվա հայ գիտնականների նվաճումները: Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի բացման խոսքից հետո ներկաներին և բոլոր հայ գիտնականներին ողջույնի և օրհնանքի խոսք է ասում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրապետը՝ Գարեգին Երկրորդը:

Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը շնորհավորում և շքանշաններ է հանձնում գիտնականներին: Ակադեմիայի բազմավաստակ ներկայացուցիչները պատվավոր կոչումների վկայագրեր ու շքանշաններ են ստանում, Կառավարական պատվավոր կոչումների, շքանշանների են արժանանում ակադեմիկոսներ Վլադիմիր Բարխուդարյանը, Ռուբեն Զրբաշյանը, Վլադիմիր Խոջաբեկյանը, Արմեն Գալոյանը, Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը և ուրիշները, դրանով ևս մեկ անգամ ընդգծելով հայ գիտական մտքի կաճառի ահռելի ավանդը երկրի կայացման ու զարգացման գործում: Խոր, իմաստալից է Ակադեմիայի պատմությունը՝ նման իր ժողովրդի ու երկրի պատմությանը: Հայոց խոշորագույն հուշարձանները կառուցվել են երկրի համար ամենածանր ժամանակներում, ասես հաստատելով, իմաստավորելով ժողովրդի ապրելու, երկիրը շենացնելու կամքն ու երազանքը: 1943-ին, երբ Եվրոպայում մոլեգնում էր ֆաշիզմը, երբ երկրի զգալի մասը հրդեհվում էր գերմանական լծի տակ, ու հայորդիները դաժան կռվի էին նետվել հայրենիքը պաշտպանելու համար, 1943 թվականին Երևանում հիմնվում է Գիտությունների ակադեմիա: Մեծատաղանդ գիտնական Հովսեփ Օրբելու բացման խոսքը ոչ միայն ազդարարեց հայ գիտական կենտրոնի ծնունդը, այլև հաստատեց մեր ժողովրդի ապրելու, հարատևելու անհողդողդ կամքը: Երկու տարի հետո միայն հայորդիները Քոչարի կբռնեն Բեռլինի կենտրոնում, իսկ այսօր նրանք մեծ հավատով իրենց լավագույն զավակներին ընտրում են առաջին ակադեմիկոսներ. Հովսեփ Օրբելի, Դերենիկ Դեմիրճյան, Ստեփան Զորյան, Լևոն Օրբելի, Ավետիք Իսահակյան, Արամ Խաչատրյան, Մարտիրոս Սարյան:

Հայաստանի Ակադեմիայի պատմությունը սերտորեն կապված է Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի պատմության հետ:

- Հովսեփ Օրբելի, Վիկտոր Համբարձումյան: Այդ նրանք էին, որ ակադեմիական գիտությունը նոր մակարդակի բարձրացրին, այն ծառայեցնելով նոր կյանքի կառուցման ուղին բռնած հանրապետության խնդիրներին:

Գյումուշգեսը դարձավ էլեկտրաֆիկացման խորհրդանիշը, առանց որի անհնար էր երկրի ինդուստրիալ զարգացման ծրագրի կենսագործումը: Հետո վերածնվող հանրապետությանը պետք էին գիտական նոր կենտրոններ՝ արժանի հայ մտքին ու հայ մարդուն: Ծնվեց Բյուրականը, մաթեմատիկական մեքենաների ինստիտուտը, ծնվեցին Հայկական արագացուցիչը, «Հրազդանն» ու «Նաիրին», մաթեմատիկական այլ մեքենաներ: Հայաստանը նախկին մեծ տերությունում առաջնակարգ տեղ գրավեց գիտական մտքի զարգացման գործում, աճեց, զարգացավ գիտական մի ամբողջ սերունդ:

Մենք հաճախ ենք ասում, թե հայ եկեղեցին հոգևոր առաքելությունից բացի մեզ համար ունի նաև պատմա-մշակութային, գիտական մեծ նշանակություն: Ասես այդ բոլորը միաձուլված է մեկ բառի մեջ՝ էջմիածին: Այն միայն հոգևոր կենտրոն չէ, այլ իրոք պատմամշակութային, գիտական կենտրոն: Եվ պատահական չէր, որ հանդիսավոր ժողովից հետո հյուրերի ճանապարհը ձգվեց դեպի էջմիածին: Հայ եկեղեցու հովվապետ Գարեգին Երկրորդը հյուրերին է ներկայացնում մեր եկեղեցու պատմությունը, կաթողիկոսական ընտրակարգը և հուշամեդալներ հանձնում հյուրերին: Հյուրերը դիտում են հայ եկեղեցուն պահ տրված, թանկարժեք քարերով զարդարված ոսկեձույլ խաչն ու այբուբենը: Հյուրերը դեռ հոգևոր կենտրոնից ստացած տպավորությունների տակ էին, երբ ավտոշարասյունը ժամանեց Բյուրական: Այստեղ է աշխարհահռչակ աստղադիտարանը, մեծատաղանդ աստղագետ Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանը և գերեզմանը: Ապա ճամփան հյուրերին տանում է Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների տուն-թանգարանը:

Հանրապետության պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի մոտ տեղի ունեցած ընդունելությունը ջերմ էր. հյուրերը ծանոթացան հանրապետությունում կատարվող վերափոխումներին:

1915 թվականի ողբերգության՝ եղեռնի, զոհերի հուշահամալիր. հանրապետություն այցելած բոլոր հյուրերը իրենց հարգանքի տուրքն են համարում այցելությունը այդ համալիրը: Ակադեմիայի հոբելյանական հանդիսության մասնակիցները այցելեցին հուշահամալիր, իսկ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրամյանը միության ծառն է տնկում համալիրի տարածքի այգում: Այդ միությունն էլ ժողովի մասնակիցներին համերգասրահ է հրավիրում հայ արվեստի գործիչների մասնակցությամբ համերգը ունկնդրելու:

Մեր առաջընթացի հուրը, որը վառել են մեր մեծերը՝ Մովսես Խորենացին ու Անանիա Շիրակացին, Գրիգոր Տաթևացին ու Մխիթար Գոշը, Թորոս Ռոսլինն ու Ֆրիկը, անշեջ հուրը, որը պարգևեց մեզ մեծն Մեսրոպ Մաշտոցը, հուսալի ձեռքերում է, այն կմնա անշեջ և կլուսավորի նոր սերունդների ուղին, քանի կա Հայաստանը, քանի կա հայ ժողովուրդը:

- Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 60-ամյակը պարտավորեցնող է,- իր զեկուցման մեջ հոբելյանական ժողովն նշեց ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը:- Այն ոչ միայն հարգանքի տուրք է գիտության երախտավորներին, անցյալի արարումներին, այլ նաև նոր մեկնարկ՝ հայկական ակադեմիական գիտություն նոր բարձունքի հասցնելու համար:

ԵՐԿՆՔԻՑ ԹԱՓՎՈՒՄ ԷՐ...

Ի՞նչ է երկնքից թափվում մեր գլխին: Անձրև, ձյուն, կարկուտ, իսկ որ բախտներդ չբերի՝ վերևներում սավառնող մի թևավոր իր արտադրանքով «կբախտավորեցնի» ձեզ՝ ծրտելով ձեր գլխին: Սակայն իրականում թափվում են ոչ միայն վերը թվարկածները, այլև ավելի էկզոտիկ առարկաներ: Այս վերջին երևույթի պատճառների մասին կան բազում տեսություններ, սակայն դրանցից ոչ մեկը լիովին չի բացատրում դրա էությունը:

Պարբերաբար, այստեղ ու այնտեղ երկնքից ցած են թափվում գորտերի, օձերի, բադերի ու այլ արարածների անձրևներ: Նման երևույթների մասին հիշատակություններ կան դեռևս Հին Հունաստանի գրավոր աղբյուրներում: Դրանցից մեկում նկարագրվում է երեք օր տեղացող ձկնային անձրևը:

1896 թվականին ԱՄՆ-ի Բատոն-Ռուժ քաղաքի վրա տեղաց «թռչունների անձրև»: Փողոցներում թափված էին թռչունների տարբեր տեսակներ՝ մոլորակի տարբեր ծայրերից:

1881 թվականի մայիսի 28-ին անգլիական Ուորչեսթեր քաղաքի վրա թափվեց խեցգետինների տեղատարափ «անձրևը»: Ալաբամայում (ԱՄՆ) երկնքից ցած էին թափվում օձաձկներ և խխունջներ: 1857 թվականին Մոնրեալի երկնքից տեղաց հորդառատ «մողեսների անձրևը»: Իսկ 1911 թվականի հունվարի 26-ին Կոլոմբո քաղաքի (Ցեյլոն) երկնքից տեղաց հազարավոր «օձերի անձրևը»: Ըստ որում, բոլոր օձերը ունեին արտասահմանյան ծագում:

Պատահում է նաև, որ բացի կենդանիներից, երկնքից թափվում են 20 սմ-ից մինչև 3 մետր երկարության սառցակտորներ: Անգլիական Ռոշիր քաղաքում 1843 թվականի օգոստոսի 13-ին երկնքից ընկավ մի ահռելի սառցաբեկոր, որի քաշը կես տոննա էր, իսկ երկարությունը՝ վեց մետր: Սառցաբեկորների անձրևները հայտնի էին նաև հին հույներին:

Լինում են նաև քարե անձրևներ, որ ավելի շատ պիտի կոչել «քարե կարկուտ»: Արձանագրված են նաև «արյունե անձրևներ» և անձրևներ՝ թարմ մսակտորներից:

Իսկ ամենահաճելի անձրևը տեղացել է 1857 թվականին, ֆրանսիական Բուրժե քաղաքի երկնքից... երկնքից թափվել էր «դրամի անձրև»:

Համաձայնություն և աշխատանք

Գաղտնի չէ, որ խորհրդային ժամանակներում արհմիությունները շատ-շատ հեռու էին միջազգային չափանիշներով արհմիություն կոչվելու և մանավանդ նրան վերապահված խնդիրներն իրականացնելու տեսակետից: Սակայն որքան էլ թերի, որքան էլ խոցելի, այդ արհմիությունները կային և միլիոնավոր մարդիկ այս կամ այն չափով օգտվում էին նրա ընձեռած ու բաժանած բարիքներից:

Այո, այն ժամանակներում արհմիությունները գրեթե պետական կարգավիճակ ունեցող կազմակերպություններ էին, որոնք հիմնարկություններում իրականացնում էին պետության սոցիալական ծրագրերը: Պետությունը աշխատավարձի ֆոնդի սոցիալական ծախսերի մասը տնօրինելու իրավունքը տվել էր արհմիություններին, որոնք և հոգում էին աշխատողների սոցիալական կարիքները: Ակտիվ մասնակցում էին առողջարանների, հանգստյան տների, մսուր-մանկապարտեզների, պիոներական ճամբարների ստեղծման գործընթացին: Սոցիալական հավասարության պահպանման սկզբունքով բաշխում էին առողջարանների, հանգստյան տների, պիոներական ճամբարների ուղեգրերը, ավտոմեքենաները, անաշխատունակության թերթիկներով վճարումները:

1991 թ. անկախություն ձեռք բերելուց հետո պատկերը փոխվել է: Թալանված գործարանները, քայքայված արդյունաբերությունը, ավերված և աղքատ տնտեսությունը, գործազուրկների հոծ ամբոխը իր հետքը թողեց նաև արհմիությունների վրա: Այն իմաստով, որ եթե չկա կազմակերպված բանվոր դասակարգ, չկան հզոր աշխատանքային կոլեկտիվներ, չկա և նրանց շահերը պաշտպանող ուժեղ արհմիություն, որի հետևանքով թուլացել է սոցիալական ընդդիմությունը, որը կարող էր վճռական դեր ունենալ՝ աշխատավոր մարդկանց շահերի պաշտպանության տեսակետից: Արհմիութենական աշխատանքը դժվարացավ նաև այն պատճառով, որ կառավարությունը հետ վերցրեց նրան տրամադրվող սոցիալական գումարները:

Այսպիսով, արհմիությունների ֆինանսական բյուջեն ձևավորվում է միայն նրա անդամներից գանձվող անդամավճարներով:

Նշածից երևում է, որ այսօր անհամեմատ դժվարացել է արհմիությունների աշխատանքը և նրա հաջողությունը պայմանավորված է միայն արհմիության աշխատողի ստեղծագործական ակտիվությամբ և հմտությամբ:

2000 թ. դեկտեմբերի 31-ին հանրապետության նախագահը ստորագրեց Ազգային ժողովի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության արհեստակցական միությունների մասին օրենքը: Համաձայն օրենքի, արհմիությունները հանդիսանում են աշխատողների սոցիալական շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններ: Այս կարգավիճակով է այսօր աշխատում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի միացյալ արհմիությունների կազմակերպությունը, որն ունի 4200 անդամ, որոնք աշխատում են ԳԱԱ համակարգի 43 հիմնարկներում:

Մենք աշխատանքներ ենք տանում մեր աշխատողների իրավական և սոցիալական շահերի պաշտպանության ուղղությամբ: Այսօր սպառողական զամբյուղի արժեքը զգալի գերազանցում է գիտաշխատողի աշխատավարձը, որը չի բավարարում նույնիսկ տրանսպորտի համար: Հետևաբար, մեր աշխատողների մեծ մասը սոցիալապես անապահով է և մշտական օգնության կարիք ունի: Միացյալ արհկոմը հասարակական բարեգործական տարբեր կազմակերպությունների միջոցով փորձում է թեթևացնել աշխատողների հոգսերը՝ տրամադրելով նրանց սննդամթերք և հագուստ:

Զգալի են այն հաջողությունները, որ մենք ունենք աշխատողների բուժման և հանգստի կազմակերպման բնագավառում:

Սկսած 2000 թ. յուրաքանչյուր տարի համակարգի 150-200 աշխատողներ անվճար բժշկական հետազոտություններ են անցնում, որը կազմակերպում է իր լավագույն մասնագետների և նորագույն սարքավորումների միջոցով «Շտապ օգնություն» գիտա-բժշկական կենտրոնը: «Դիագնոստիկա» և մամոգրաֆիկ հետազոտությունների կենտրոններից ստացված անվճար ուղեգրերը հատկացվում են սոցիալապես առավել կարիքավոր աշխատողների:

Տարեկան մինչև 10 աշխատող անվճար բուժվում է Կարմիր խաչի «Գրացիա» վերականգնողական կենտրոնում և ֆիզիոթերապիայի ինստիտուտում: Անցած տարվանից «Գրանդ Քենդի»-ի կողմից ակադեմիային տրամադրվող օգնությունից միացյալ արհկոմը տնօրինում է տարեկան 300.000 դրամ, որը որպես օգնություն տրամադրվում է կարիքավոր աշխատողներին: 1988 թ. գործում է ակադեմիայի Արզականի գիտաժողովների տունը, որտեղ յուրաքանչյուր տարի ամառային ամիսներին անվճար հանգստանում է համակարգի 30-40 աշխատող: Աշխատողների անվճար հանգստի համար գումարներ տրամադրում է ԳԱԱ պրեզիդենտը և կրթության ու գիտության աշխատողների արհմիության հանրապետության միությունը:

Միացյալ արհկոմի մշտական ուշադրության կենտրոնում է աշխատողների իրավունքների պաշտպանության հարցերը: Առանց մեր մասնակցության չի որոշվում որևէ աշխատողի կրճատման կամ աշխատանքից ազատելու հարց: Իմ խորին համոզմամբ, եթե արհմիութենական աշխատանքի բնագավառում մենք հասել ենք որևէ հաջողության, ապա դա պայմանավորված է ակադեմիայի ղեկավարության հետ ունեցավ փոխադարձ համաձայնության և խաղաղ աշխատանքային մթնոլորտով, արհկոմի խնդրանքը բավարարելու ակադեմիայի պրեզիդենտի պատրաստակամությամբ:

Օգտվելով առիթից խորին շնորհակալություն ենք հայտնում այն բոլոր կազմակերպություններին, որոնք ըմբռնումով են մոտենում մեր գիտնականների հոգսերին և սիրով ու պատրաստակամությամբ առաջարկում են իրենց օգնությունը:

Կիմա ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ միացյալ արհկոմի նախագահ, կենս. գիտ. թեկնածու

Ակադեմիկոս Աշոտ ՌՈՒԽԿՅԱՆ-100

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Այսօր ցավով պետք է արձանագրենք, որ վերջին 8-10 տարիներին ինստիտուտի գործունեությունը խաթարվել է, չեն գործում լաբորատորիաները, գիտական ծրագրերը: Շարք մտած ամերիկյան օգնության թեմաները պարզունակ են, մակերեսային, հայկական անասնաբուծության խնդիրներին չառնչվող: Եվ այսօրվա հանդիսությունը կհամարվի օգտակար, ռուխկյանական պահանջկոտության արտացոլում, եթե մեր ղեկավարները հարգեն ինստիտուտի գիտնականներիս պահանջը՝ ինստիտուտի վերականգնման խնդրով, և, ինստիտուտն անվանակոչեն անասնաբուծական գիտության մեծ ռահվիրայի անունով»:

Գյուղ. ակադեմիայի պրոֆեսոր Գ. Ն. ԲԱՂԴԱՍԱՐՈՎԻ ելույթից.

- Մեզ բոլորիս համար ուրախություն և պատիվ է մեր ուսուցչի՝ Ա. Ա. Ռուխկյանի 100-ամյա հոբելյանի նշումը, քանզի նրա անվան հետ է կապված հայկական անասնաբուծության գիտական զարգացման՝ վերելքի բեկումնային: Այս առիթով ոլորտի գիտնականներս կրկին շփվեցինք անասնաբուծության հիմունքների խնդիրներին, այսօրվա դրվածքներում գիտության նահանջողական իրավիճակին, կենդանիների մթերատվության անկումայնությանը և դրանց պատճառներին:

Այդ ուղղությամբ վերլուծումներն, ինչ խոսք, ցավ են պատճառում անասնաբույծ գիտնականներիս:

Դարի մեծագույն անասնաբույծ Ա. Ռուխկյանի պահանջներից դուրս են դրանք (ապադասային, անօրինակ), և գիտնականը դժգոհ կմնար նման մակարդակներից՝ թե՛ գիտական և թե՛ արտադրական ոլորտներում...

Մյուս մտորումս հայկական ոչխարաբուծության զարգացման ռուխկյանական արվեստի հարցն է: Այսպես, խորհրդային իրավակարգի տարիներին «մեծ քիմիայի» հաղթարշավի ժամանակաշրջանում Ա. Ռուխկյանի հոգում ծանր տվայտանք կար. հայկական գորգագործությունը պահպանել դարերից մեզ հասած գեղեցկությամբ, որի գրավականը մետաքսանման շողշողուն բրդահումքն է...

Ստահողացումը գործնական խիզախում էր պահանջում: Եվ ահա տեղական բալբաս կոպտաբուրդ ցեղի մաքիները տրամախաչվում են ամերիկյան ռամբուլյե և անգլիական լինկոլն նրբագեղմ ցեղերի խոյերով, ստացվածը՝ հայկական կիսանրբագեղմ... ապա՝ նոր տրամախաչում՝ տքնանք, հետևողական նպատակադիր աշխատանք, որ տևեց 40 տարի...

Եվ արդյունքում՝ ցանկալի հայկական կիսակոպտաբուրդ ցեղի ոչխարի տեսակը, որ օժտված է ամուր և գեղեցիկ համակառուցվածքով և մթերատու բարձր ու պտղատվության հատկանիշներով (ցուցանիշները՝ 3,0-3,5 կգ բրդատվություն, 120-125 գառ՝ 100 մաքիի հաշվով): Հայկական ոչխարաբուծության մեջ իզուր չէ, որ այն կոչվում է «հայկական սպիտակ մարգարիտ»... Ռուխկյանը թեպետ ընդհանուր անասնաբուծության զարգացման ջատագով էր և նվիրյալ, սակայն գիտնականի նրա հոբբին, սրտի անկյունում պահվածը գործունեության սկզբից մինչ ավարտը մնաց հայկական ոչխարաբուծությունը:

Այստեղ դրսևորվեցին նրա անհատականության բոլոր երանգները՝ գիտական, արտադրական, մարդկային, հայրենասիրական... Ահա և այդ ամբողջի մեջ կառուցվեց գիտնական-ոչխարաբույծ Ռուխկյանի ուրույն դպրոցը (իսկ ես կանվանեմ՝ «համալսարան»), որում քայլեցին մեր ժամանակի նրա աշակերտները՝ Մ. Առաքելյանը, Մ. Ոսկանյանը, Մ. Քարամյանը և ուրիշներ:

Ակադեմիկոս Ռուխկյանի ազդեցությունը ոչխարաբույծ գիտնականների վրա զգալի էր, և կար ժամանակ, որ Հայաստանը համարվեց ոչխարաբուծության գիտական կենտրոն. երկրի տարբեր վայրերից եկան, ղեկավարվեցին և պաշտպանեցին դոկտորականներ, թվով 18-ը, որից 7-ը՝ հայաստանցիներ...

Ես միանում եմ պրոֆեսոր Ռ. Վառյանի առաջարկությանը՝ գ/հ ինստիտուտը վերականգնելու նող՝ արտադրության կազմակերպման համար: Աշոտ Ռուխկյանի ստացած ոչխարի ցեղն է՝ կիսակոպտաբուրդը... մեզանում դրան բոլորը գիտեն...

1989 թ. ի վեր Մարտունու շրջանի Մադինայի անհատ գյուղացիներից 180 գլխաքանակով մենք բերեցինք դրանք: Հետագայում (2001 թ.) կանխիկ գումարով 800 գլուխ հայկական կիսակոպտաբուրդ գնեցինք Արագածի նախկին տոհմային տնտեսությունից: Դա օգտավետ կորիզ դարձավ մեր տնտեսության համար: Որոշել ենք բազմապատկել գլխաքանակը և մոտակա տարիներին հասցնել մինչև 5000 գլխի: Այն արժեքավոր հումք է ինչպես գորգագործության, այնպես և բարձրորակ մահուդի արտադրության համար: Մենք խորին գիտակցումով ենք վերաբերվում այս գործին. կարծես թե մշտապես՝ ամեն անգամ մեզ հետ խոսում-խորհրդակցում է ցեղի հեղինակը՝ մեծ գիտնական, ակադեմիկոս Ա. Ռուխկյանը, որի նվաճումն ուղղակի ավանդ է, հայրենասիրություն...

Փա՜ռք նրա գործին: Եվ նրա հիշատակը հավերժացնելու լավագույն միջոցներից մեկը կիսակոպտաբրդի՝ ոչխարի լավագույն ցեղերից մեկի, գենոֆոնդը պահպանելն է՝ սերնդից սերունդ փոխանցելու ակնկալիքով»:

Մեդորա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գյուղ. գիտությունների դոկտոր, լրագրող

ՀՈԴՎԱԾԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ՀՈՎԱՆԱՎՈՐԵԼ Է ԱՌԻՆՋԻ ՇԱՌՈՒԿՅԱՆ ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՌՈԶԱ ՇԱՌՈՒԿՅԱՆԸ

Ֆերմեր տիկին Ռոզա Շառուկյանի («Մուլտի գրուպ» կոնցեռնի Շառուկյան ՍՊԸ տնօրեն, Կոտայքի մարզ, գ. Առինջ) ելույթից.

- Սպիտա՜կ, սպիտա՜կ մետաքսափայլ ոչխարներ... հենց միայն շքեղ, առատ բրդով կենդանիների տեսքը ուշագրավ է, առինքնող՝ արտադրության կազմակերպման համար: Աշոտ Ռուխկյանի ստացած ոչխարի ցեղն է՝ կիսակոպտաբուրդը... մեզանում դրան բոլորը գիտեն...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ.

հոբելյաններ, հարցադրումներ, քննարկումներ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Կենսական և հրատապ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ կլոր սեղան «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ (ԳՁՕ). հնարավոր հեռանկարները, հիմնախնդիրները, վտանգները» թեմայով: Կլոր սեղանը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն, «ЮНЕП» ազգային կոմիտեն և եվրամիության «Բնապահպանական տեղեկատվությունը, կրթությունը, հասարակության իրազեկությունը» ծրագիրը: Այն ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանը:

ԳՁՕ-ի և ԳՁ արտադրանքի հիմնախնդիրը առաջացավ Հայաստան մեծ ծավալների մարդասիրական օգնության մուտք գործելուց հետո. հատկապես սերմացուների տեսքով, որոնք սկսեցին արագորեն դուրս մղել գյուղատնտեսական արտադրանքի տեղական տեսակները:

Մինչև այժմ անհայտ է, թե հատկապես ինչպիսի և ինչ քանակով գենետիկորեն ձևափոխված արտադրանք է իրացվել և շարունակվում է իրացվել, քանի որ հայկական շուկան պաշտպանված չէ ԳՁՕ-ից: Կասկածի տակ են դրվում արագ աճող ծառերի, պահածոյացված եգիպտացորենի, օսլայի, ցորենի և այլ նյութերի ծագումը:

Այդ հիմնախնդիրները Հայաստանում օրենսդրորեն մասնակիորեն արտացոլված է մի շարք օրենքներում. «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին», «Սպառողների պաշտպանության մասին», «Ստանդարտացման և սերտիֆիկացման մասին», «Արտոնագրման մասին» և այլն: Սակայն այդ օրենքների ոչ մի դրույթում չկա կետ, որը վերաբերի հատկապես ԳՁՕ-ին:

Միջազգային մակարդակով այդ խնդիրը դրվում է ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից եվրոպական Օրհուսյան համաձայնագրի, ինչպես նաև կենսաբազմազանության մասին ՄԱԿ-ի համաձայնագրի և Կարտահենյան արձանագրության շրջանակներում:

Օրհուսյան համաձայնագրի տեսակետից հասարակությունը պետք է իմանա, թե մարդու առողջության համար որքանով է անվտանգ ԳՁ արտադրանքը և որքանով նա կարող է փոխել բնության, բնական միջավայրի որակը: Այդ տեղեկատվությունը հնարավորություն կտա սպառողին կատարելու իր ընտրությունը՝ հանուն սեփական առողջության և շրջակա միջավայրի:

Այդ համաձայնագիրը հարց է դնում ինչպես ներմուծվող, այնպես էլ արտահանվող արտադրանքի գենետիկական ծագման մասին ապրանքանիշի առկայության և սերտիֆիկացման անհրաժեշտության վերաբերյալ: Այդ կապակցությամբ հրատապ նշանակություն ունեն հետևյալ խնդիրները. ներմուծվող և արտահանվող արտադրանքի նկատմամբ վերահսկողությունը և ապրանքանշագրումը, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ԳՁ արտադրանքի ազդեցության ուսումնասիրության ուղղությամբ լաբորատոր հետազոտական աշխատանքները, համապատասխան օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը ԳՁՕ-ի մասին, համապատասխան տեղեկատվությամբ հասարակության ապահովումը և հասարակայնության կողմից երկրում ԳՁՕ-ի զարգացման և թույլտվության մասին որոշումների ընդունման նկատմամբ ազդեցության մեխանիզմների մշակումը:

ՀՀ ԳԱԱ լրատվական ծառայություն

ՀՀ ԳԱԱ նախագահությունը քննարկեց...

«Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա-առկա վիճակը և հեռանկարները» հարցը և որոշեց ի գիտություն ընդունել համանուն ակադեմիկոս Է. Ղազարյանի համանուն զեկուցումը:

Ի կատարումն ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» որոշման 2-րդ կետի, ինչպես նաև հաշվի առնելով նանոէլեկտրոնիկայի և նանոնյութերի զարգացման բացառիկ կարևորությունը հանրապետության տնտեսության համար, այդ ոլորտով զբաղվող գիտական կազմակերպությունների լայն աշխարհագրությունը և ոլորտի միջդիսցիպլինար բնույթը, ՀՀ ԳԱԱ նախագահությանը կից ստեղծել համապատասխան գիտական խորհուրդ:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների և բնական գիտությունների բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներին (Է. Ղազարյան և Ա. Շահինյան)՝ մեկ ամվա ընթացքում ՀՀ ԳԱԱ նախագահություն ներկայացնել գիտական խորհրդի կանոնակարգը և կազմը:

Պարիս Հերունի - 70

Լրացավ աշխարհահռչակ գիտնական, ռադիոֆիզիկայի բնագավառում նշանավոր մասնագետ, ռադիոֆիզիկական չափումների ԳՀԻ-ի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Պ. Հերունու 70-ամյակը:

Նրան ջերմորեն շնորհավորեցին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը, ակադեմիկոսներ Յու. Սարգսյանը, Ա. Մկրտչյանը, Է. Ղազարյանը, Ռ. Ղազարյանը, հոբելյարի գործընկերները, բարեկամները: Խոսելով Պ. Հերունու գիտական նվաճումների մասին, մասնավորապես ռադիոլոկացիոն անտենաների ստեղծման բնագավառում, նշվեց, որ նույնիսկ շատ խոշոր գիտնականներից ոչ բոլորին է հաջողվում ստեղել նոր գիտական ուղղություններ, գիտական դպրոցներ: Պ. Հերունին ոչ միայն ստեղծել է վերջիններս, այլ նաև կարողացել է իր ուրույն խոսքը ասել հայ ժողովրդի պատմության ծագումնաբանության, հնագիտության հարցերի վերաբերյալ:

Պարիս Հերունուն շնորհավորեց ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանը՝ նախարարության անունից նրան հանձնելով հուշամեդալ: Հոբելյարին գիտության վաստակավոր գործչի կոչում և «Գիտնականի աստղ» մեդալ է շնորհել Բնապահպանության միջազգային ակադեմիան:

Ողջունում ենք...

ՀՀ ԳԱԱ-ն և ԵՊՀ-ը պաշտպանում են Երևանում 3-րդ սերնդի սինխրոտրոնի ստեղծումը CAWDLE նախագծի շրջանակներում: ՀՀ ԳԱԱ երեք բաժանմունքների հատուկ նիստում՝ նախագծի ներկայացուցիչների մասնակցությամբ, որոշում ընդունվեց դիմել ՀՀ կառավարությանը՝ սույն նախագիծը Հայաստանում գիտության գերակա ուղղությունների կրիտիկական տեխնոլոգիաների ցուցակը մտցնելու մասին: Որոշումը հիմնավորելիս, մասնավորապես, նշվել է, որ նոր արագացուցիչը, որն իր պարամետրերով շատ ավելի հզոր է, քան Երևանի արագացուցիչը, նոր հնարավորություններ կստեղծի էլեկտրոնիկայի, բժշկության, դեղագործության և ուրիշ բնագավառներում առաջավոր տեխնոլոգիաների զարգացման համար:

Որոշումն ընդունելիս հաշվի է առնվել նաև այն փաստը, որ նման արագացուցիչների պահանջարկը տասնյակներ անգամ գերազանցում է աշխարհում դրանց իրական գոյության ունեցող քանակը: Երևանյան նախագիծը 6-րդն է աշխարհի տարբեր տարածաշրջաններում աշխատող նման սարքերի շարքում:

Ինչպես հայտնեց նախագծի տեխնիկական տնօրեն Վ. Ցականովը, արդեն այսօր Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի միջոցներով ստեղծված CAWDLE գիտական կենտրոնը ապագա ուսումնասիրությունների հայտեր է ստանում տարբեր երկրների ավելի քան 80 գիտական կենտրոններից:

Արագացուցիչի մոտավոր արժեքը կազմում է 55 մլն ԱՄՆ-ի դոլար, նրա շահագործման սկիզբը նախատեսվում է 2007 թվականին:

Հայ դենդրոլոգների ասոցիացիա

Նման նախաձեռնության հանդես էին եկել ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտը և բնապահպանական մի շարք կազմակերպություններ: Հիմնադիր ժողովում հաստատվեց ասոցիացիայի կանոնադրության նախագիծը և նախագահ ընտրվեց պրոֆեսոր Օլգա Ճուղուրյանը:

Կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են լինելու անտառների վերականգնումը և ռացիոնալ օգտագործումը, դենդրոֆլորայի գենոֆոնդի պահպանումը, քաղաքների կանաչապատման նախագծերի մշակումը, այդ քաղաքներում այնպիսի բույսերի տնկումը, որոնք չեն առաջացնում ալերգիա, ընդունակ են կլանել փոշին, օդում եղած վնասակար խառնուրդները և այլն:

Ինչպես ընդգծեց Բուսաբանության ինստիտուտի տնօրեն Ա. Չարչօղլյանը, ասոցիացիան պետք է ուշադրություն բևեռի նախ և առաջ իրականացվող նախագծերում գիտնականներին և մասնագետներին ներգրավելու վրա, ինչպես նաև օգտագործի գոյություն ունեցող բազաները:

Շրջակա միջավայրի իրավական պաշտպանության հասարակական կենտրոնի նախագահ Ա. Իսոյանը առաջարկեց կենտրոնացնել բոլոր ջանքերը՝ Հայաստան գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների ներթափանցմանը խոչընդոտելու համար: Նա նույնպես առաջարկեց բուսաբանական այգին դարձնել բազա՝ երիտասարդության և ուսանողության էկոլոգիական կրթության համար:

Որոշվեց ընտրված ծրագրերը ներկայացնել համապատասխան խորհրդարանական հանձնաժողովներին՝ փորձագետների մակարդակով. ասոցիացիայի հիմադիրների կազմում ընդգրկված են Աժ 4 փորձագետ:

Ինգա ՁԱՌԱՖՅԱՆ

Միքայել Տեր-Միքայելյան -80

Լրացավ անվանի ֆիզիկոս Միքայել Տեր-Միքայելյանի ծննդյան 80-ամյակը: Եվ հենց նրան էր նվիրված ՀՀ ԳԱԱ նախագահության նիստը:

Իր շնորհավորական խոսքում ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը նշեց, որ Մ. Տեր-Միքայելյանը այն սակավաթիվ աշխարհահռչակ գիտնականներից է, որը կարող է պատիվ բերել ոչ միայն հայրենի գիտությանը, այլ ցանկացած երկրին և ցանկացած երկրի գիտությանը: Հոբելյարին շնորհավորեցին ակադեմիկոսներ Ռ. Մարտիրոսյանը, Դ. Սեդրակյանը, Լ. Աղալովյանը, Ռ. Ավագյանը, Յու. Չիլինգարյանը, Էդ. Ղազարյանը, նրա աշակերտներն ու գործընկերները:

Մ. Տեր-Միքայելյանը ֆիզիկագի հայկական դպրոցի հիմնադիրներից է: Նա մեծ ներդրում ունի հատկապես ճառագայթային ֆիզիկայի, քվանտային էլեկտրոնիկայի, լազերային ֆիզիկայի, գերհաղորդականության բնագավառներում: Նրա ջանքերի շնորհիվ 1960-ական թթ. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը բարձրացավ նոր մակարդակի և դարձավ ժամանակի չափանիշներին համապատասխանող գիտության դարբնոց: Նրա և Գ. Սահակյանի անմիջական ղեկավարությամբ համալսարանում սկսեց մեծ թափով զարգանալ ֆիզիկայի նոր ուղղությունները:

Տեր-Միքայելյանի ղեկավարությամբ պատրաստվել են բազում գիտական կադրեր: Գիտնականի մենագրությունները ահա արդեն 40 տարուց ավելի է, ինչ ֆիզիկոսների մի քանի սերունդների սեղանի գիրք են դարձել: Նա ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների և Լազերային տեխնիկայի ինստիտուտների հիմնադիրներից է, երկար տարիներ ղեկավարել է ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի համար՝ հոբելյարը հատկապես նշեց, որ իր կայացման և ընդհանրապես հայաստանյան գիտության զարգացման գործում մեծ ավանդ ու դեր են ունեցել Վիկտոր Համբարձումյանն ու Ֆադեյ Սարգսյանը:

Մելինե ՍԱՐԳՍՅԱՆ

Հայագիտության նոր այցեքարտը

2003 թ. սեպտեմբերի 15-20-ը Երևանում տեղի ունեցավ «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» հիմնախնդրին նվիրված միջազգային գիտական համաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ և Երևանի պետական համալսարանը:

Գիտական համաժողովի լիագումար նիստում, նրա պատմագիտության, բանասիրության, մշակույթի, հայոց եկեղեցին և հայագիտությունը մասնաճյուղերում, երեք կլոր սեղաններում լսվեց և քննարկվեց Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան 22 երկրներից ժամանած 73 մասնագետների 172 զեկուցում: Ուշագրավ հարցադրումներ և գիտական արժեքավոր դիտարկումներ եղան հայագիտության բոլոր ասպարեզների և բոլոր դարաշրջանների պատմամշակութային հիմնախնդիրների, հայագիտության արդի վիճակի և զարգացման հեռանկարների մասին:

Արձանագրվեց, որ Հայաստանում և արտերկրում վիթխարի աշխատանք է կատարվել հայագիտության բնագավառում: Միաժամանակ նշվեց, որ Հայաստանի անկախ պետության ընձեռած հնարավորությունները լիովին չեն օգտագործվում գիտության այս ուղղության զարգացման համար, ամբողջ խորությամբ չի ընկալվում այն իրողությունը, որ Հայաստանի քաղաքական անկախության պայմաններում հայագիտությունը դառնում է ազգային-հասարակական կյանքի վրա ներազդող, նրան ուղղություն տվող հզոր ուժ: Հայագիտությունն է պահպանում հայ ժողովրդի դարավոր մշակույթը, ժողովրդի ազգային նկարագիրը, սերունդներին կրթում, հայեցի դաստիարակում, իր նպաստը բերելով համազգային հոգեբանության ձևավորմանը, ազգային միասնության գաղափարին: Արդի ժամանակաշրջանում հայագիտությունը վերածվում է հայ ժողովրդի հետագա առաջընթացի հուժկու ազդակի, ազգային անվտանգության ապահովման էական լծակի: Այդ ամենից անհրաժեշտորեն բխում է, որ հայագիտությունը պետք է դառնա պետության ազգային քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը:

Նվիրված Մանվել Մանվելյանին

Վերջերս ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը կազմակերպել էր «Մանվելյանական ընթերցումներ»՝ նվիրված նշանավոր քիմիկոս ակադեմիկոս Մանվել Մանվելյանի ծննդյան 90-ամյակին: Իր բացման խոսքում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Կ. Կոստանյանն անդրադարձավ Մ. Մանվելյանի ներդրմանը անօրգանական քիմիայի բնագավառում, այն է՝ ոչ հանքային հանածոների համալիր օգտագործման եղանակների մշակումը, բարձրորակ ապակիների ստացումը, ալյումինատային լուծույթների մաքրումը: Նեֆելինային սիենիտների քիմիական մշակման նրա առաջարկած եղանակը նախատեսում է կավահողի, ցեմենտի, մետասիլիկատների, մաքուր սիլիտահողի և այլ նյութերի միաժամանակյա ստացումը: Նա նաև բացահայտել է մետասիլիկատների և սիլիտահողի տեխնիկական կիրառման ոլորտները:

Այնուհետև ակադեմիկոս Մանվելյանի մասին հիշողություններ պատմեցին նրա աշակերտները և գործընկերները՝ Ա. Խանամիրովան, Ռ. Մամուկյանը, Գ. Գրիգորյանը, Ս. Բաբայանը, Գ. Բաբայանը:

Մ. Մանվելյանը ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կազմակերպիչն էր և առաջին տնօրենը (1957-1968, 1970-1975): Այժմ ինստիտուտը կոչվում է նրա անունով:

Վերջում ինստիտուտի տնօրեն Ս. Դավթյանը նշեց նման միջոցառումների կարևորությունը: Դրանք ունեն ոչ միայն մեծարման, այլ նաև դաստիարակչական նշանակություն, քանզի այսօր գիտության ասպարեզ են եկել արդեն Մ. Մանվելյանի աշակերտների աշակերտները: Նա առաջարկեց նման ընթերցումներ անցկացնել ամեն տարի:

Քարե՛ր, քարե՛ր, քարեր...
Դուք նրա բախտն եք, նրա
բարեկամը և թշնամին:
Բոգդան ՎԵՐԴՅԱՆ

Գիտնական և գիտության կարկառուն կազմակերպիչ, ակադեմիկոս Մանվել Մանվելյանը 1913 թ. ծնվելով Վան քաղաքում չէր էլ պատկերացնում, որ ճակատագիրը նրան կհեռացնի ծննդավայրի ջրերից և հողերից, նրան կներքաշի գիտության մի ոլորտ, որը նրա առջև խնդիր կդնի «հալեցնել» հայկական քարերը:

1934-39 թթ. աշխատելով Հանքաբանության և երկաքիմիայի համամիութենական ինստիտուտի հայկական բաժանմունքում, գիտնական Մ. Մանվելյանի նպատակը դարձավ ավելի մոտիկից ուսումնասիրել հայկական այնքան բազմազան քարերը, վեր հանել այն գանձերը, որոնք գտնվում են դրանց ընդերքում: Չնայած նրա կողմից ուսումնասիրված զանազան քարերին, ի վերջո նրա ուշադրությունը բևեռվեց Թեժսարի նեֆելինայի սիենիտների վրա:

Դա միայն սկիզբն էր: Հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ՝ սկսվեցին փորձեր, որոնց վրա ծախսվեցին անքուն գիշերներ, բայց ոչ աննպատակ: Ակադեմիկոսը իր իսկ համախոհների միջոցով Հայաստանում կազմակերպեց Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը, որի տնօրենն էր մոտ երկու տասնամյակ:

Մ. Մանվելյանի մշակած նեֆելինայի սիենիտի քիմիական եղանակը շուտով լաբորատոր փորձերից անցավ արտադրական. դրվեց Հրազդանի Լեռնաքիմիական կոմբինատի կառուցման սկիզբը:

Աշխարհի գիտնականների հայացքը հառած էր Հայաստանին. գտնվել էր քարի քիմիական ճանապարհով մշակման տեխնոլոգիան, որից ուզում էին օգտվել երկրներ, որոնք նույնպես ունեին նեֆելինային սիենիտներ կամ նման տիպի քարեր:

Նեֆելինային սիենիտների քիմիական ճանապարհով մշակման տեխնոլոգիան մեծ հեռանկար ուներ և հենց այդ պատճառով նորաստեղծ քիմիայի ինստիտուտում ընդգրկվեցին քիմիկոսներ, ինժեներներ, որոնք համալրեցին իրենց իսկ ուսուցիչների շարքերը և նրանց անմիջական ղեկավարությամբ դարձան Հրազդանի Լեռնաքիմիական կոմբինատի կառուցման, սարքավորումների ընտրման և նախագծման դրոշակակիրները:

Բայց դա ամենը չէր, ապագայում քիմիական եղանակով նեֆելինային սիենիտներից ստացվող նյութերի՝ երևանիտների, նատրիումի, կալցիումի, մետասիլիկատների, կավահողի հիման վրա, բացվեցին նոր լաբորատորիաներ, որոնցում ընդգրկված ակադեմիկոսի «ածեցրած» կադրերը նույնպես անընդհատ փնտրտուքի մեջ էին՝ նոր բնագավառներ գտնել հետագա արտադրանքի կիրառման համար:

Եվ այդպես, կոլեկտիվն անցավ մեծ ճանապարհ, գիտնականների համառ աշխատանքների շնորհիվ կատարվեցին հարյուրավոր գյուտեր, որոնք աշխարհի գիտնականների նախանձը կարող էին շարժել:

Երախտիքի խոսք եմ ուզում հղել այն ղեկավարներին, մեր այն լավագույն ընկերներին, որոնց համառ ջանքերի շնորհիվ ինստիտուտը անվանակոչվեց նրա հիմնադրի և առաջին տնօրենի՝ ակադեմիկոս Մանվել Մանվելյանի անունով, և, վերջապես ինստիտուտի մուտքի մոտ նրա անունով ցուցատախտակ փակցվեց:

Գիտնականի պրպտումները չսահմանափակվեցին միայն նեֆելինային սիենիտների կոմպլեքսային մշակմամբ, այնուհետև ուսումնասիրությունների թիրախ դարձան բազմաթիվ այլ քարեր՝ տուֆերը, բազալտները, պեռլիտները, դիատամիտները, կվարցիտները, օբսիդիանները: Ցավոք այս շարքը չէր ընդհատվի, եթե նա չհեռանար կյանքից՝ իր հետ տանելով քարերի մշակման շատ ու շատ գաղտնիքներ: Նա չհասցրեց բազմաթիվ այլ քարերի կյանք տալ, այլ միայն բարեկամացավ նրանց հետ, չնայած այդ բարեկամությունը կարճ տևեց:

Համոզված եմ, կգան ժամանակներ, երբ նրա գիտական ժառանգությունը ավելի խորը կուսումնասիրվի, նրա ստեղծած ամեն մի գյուտ, որոնց թիվը հարյուրներից էլ շատ է, կդառնա ուսումնասիրություններ և նոր բնագավառների սկիզբ:

Լինելով նրա «ածեցրած» կադրերից մեկը, ամեն անգամ երախտիքով եմ հիշում նրան:

Եվ նրա ծննդյան 90-ամյակին նվիրված իմ այս խոսքը թող շնորհակալություն լինի նրա գիտական կադրերի, ժառանգների անունից՝ մեծանուն գիտնականին, մեծ ուսուցչապետին, ակադեմիկոս Մանվել Մանվելյանին:

Ռիմա ՄԱՆՈՒԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու, Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորայի վարիչ

ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԳՈՒՄԵՐ

Ո՞ՒՄ Է ԱՊԱՍԿԱՆՈՒՄ ՄԵՐ ՈՍԿԻՆ

Երկրաբաններին հայտնի է, որ ոսկեբեր հանքավայրերը միայն ազնիվ մետաղներ չէ, որ պարունակում են: Ոսկու և արծաթի հետ միասին այդ հանքաքարերում հայտնաբերվել են 8-10, երբեմն էլ ավելի, օգտակար տարրեր, որոնցից մի քանիսը իրենց արժեքով շատ ավելի թանկ են արծաթից, իսկ դրանք գերգտվածները չեն զիջում նույնիսկ ոսկուն: Այդ բոլորով հանդերձ Հայաստանի ոսկեբեր հանքավայրերը շահագործվում են ոչ համալիր, կորզվում են երեքից ոչ ավել օգտակար տարրեր, իսկ մյուսները թափվում են:

Հայաստանում շահագործվող հանքավայրերից ոչ մեկի հումքային հենքի վրա դեռևս չի կառուցվել օգտակար բոլոր տարրերի կորզման բարձրակարգ տեխնոլոգիաներով զինված, ժամանակակից մետալուրգիական գործարան, որն ի վիճակի լինի կորզել, մաքրել ու զտել բոլոր կորզելի տարրերը:

Կորզելի քանակներով ազնիվ մետաղներ են հայտնաբերվել Հայաստանի մետաղական օգտակար հանածոների համարյա բոլոր կազմավորման պղինձ-մոլիբդենային, ոսկի-բազմամետաղային, բուն պղնձային (պղինձ-հրաբարային), ծծումբ-հրաբարային, երկաթաքարային և այլ հանքավայրերում: Սակայն, ազնիվ մետաղներն այժմ կորզվում են հիմնականում բուն ոսկեբեր կամ երկրաբանական լեզվով ասած՝ ոսկի-սուլֆիդային կազմավորման հանքավայրերից: Պղնձամոլիբդենային հանքավայրերի հանքաքարերից թողարկվող պղնձի խտանյութերում առկա ոսկու միայն մի մասի արժեքն է հատուցվում խտանյութերի վաճառքի ժամանակ: Արծաթը և հարակից տարածված մյուս բոլոր տարրերը՝ սելենը, թելուրը, բիսմուտը և այլն, ուշադրության չեն արժանանում, անտեսվում են և, հետևապես, դրանց արժեքները չեն հատուցվում: Շահումյանի այժմ շահագործվող ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարերից մինչև 2002 թ. վերջը թողարկվում էին պղինձ-ոսկի-արծաթի, ցինկ-ոսկի-արծաթի համալիր խտանյութեր, որոնք վաճառվում էին արտասահմանյան երկրներին շատ չնչին շահութաբերությամբ:

2002 թ. վերջերին Կապանի հանքահարստացուցիչ ձեռնարկությունը վաճառվել է շվեյցարական «Դենո» ընկերությանը, որին էլ վարձակալական իրավունքով շահագործման է տրվել Շահումյանի հանքավայրը: Այժմ այդ հանքավայրի հանքաքարերից ստացված խտանյութերը՝ օգտակար բոլոր տարրերով հանդերձ, տնօրինում է նշված ընկերությունը. արդյունահանված հանքաքարերի մարման դիմաց ռոյալթի է վճարում խտանյութերում հիմնական համարվող չորս տարրերի՝ պղնձի, ցինկի, ոսկու և արծաթի համար, իսկ երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքով գնահատված և հաշվեկշռային պաշարների մեջ հաշվառված 6 այլ տարրերի՝ կապարի, կադմիումի, սելենի, թելուրի, գալիումի և ինդիումի համար՝ ոչ:

ԽՍՀՄ-ի տարիներին շահագործվող Սոտքի և Մեղրաձորի ոսկու հանքավայրերի հանքաքարերից, անտեսելով դրանց մեջ առկա՝ ոսկու և արծաթի հետ հարակից տարածված 9-10 այլ տարրերը, Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում կորզվում էին միայն ոսկին ու արծաթը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այդ հանքավայրերի շահագործման իրավունքը տրվեց կանադական «First Dynasty Mines (FDM) ընկերությանը, որն էլ 2000 թ. իր բաժնետոմսերի 50 % վաճառեց Հնդկաստանի քաղաքացիներին և ապա 2002 թ. փետրվարի 8-ին՝ 2,25 մլն դոլարով դրանք ետ գնեց ու կրկին դարձավ մեր ոսկու հանքավայրերի լիիրավ տնօրինողը:

Այժմ, նշված ընկերության կողմից («Արարատի ոսկու արդյունահանման ընկերություն» անվան տակ) դրանք արագ թափով շահագործվում են: Սոտքի հանքավայրի ընդերքից 2002 թ. արդյունահանվել է ոչ մեծ քանակության՝ մոտ 200 հազ. տ հանքաքար, իսկ 2003-2004 թվականներին՝ Սոտքի լեռնահանքային ձեռնարկության տնօրեն պարոն Ա. Մովսիսյանի հայտարարության համաձայն («Դելավոյ էքսպրես» 11 մայիսի 2002 թ.), նախատեսվում է արդյունահանել 500 հազարից մինչև 0,1 մլն տ հանքաքար, որը մենք հասկանում ենք այսպես. 2003 թ. Սոտքի հանքավայրից հանքաքարի արդյունահանումը կկազմի 500 հազ. տ, իսկ 2004-ին՝ աստիճանաբար մեծացնելով լեռնահանքային ձեռնարկության հզորությունը, արդյունահանման քանակը կհասցվի մեկ մլն տոննայի: Հետագայում՝ 2005-2010 թթ. որքա՞ն կարդյունահանվի, հրապարակված չէ: Կարծում ենք, որ կանադացի գործարար՝ «FDM» ընկերության տնօրեն՝ պարոն Ջոն Լյուինսը կկատարի իր խոստումը և Սոտքի ու Մեղրաձորի հանքավայրերից հանքաքարերի արդյունահանման քանակը կհասցնի 2,28 մլն տոննայի, որից Սոտքի բաժինը կարող է կազմել մոտ 2,0 մլն տոննա:

Նշված երկու հանքավայրերի հանքաքարերից, ԽՍՀՄ-ի տարիներին, ինչպես արդեն նշել ենք, կորզվում էին, այժմ էլ կորզվում են, կարծում ենք քանի դեռ կանադացիներն այստեղ են դեռևս կորզվելու են միայն ու միայն ազնիվ մետաղները: Բայց, չէ՞ որ այդ հանքավայրերի հանքաքարերում պարունակվում են ոչ միայն ազնիվ մետաղներ, այլև շատ ու շատ արժեքավոր, ռազմավարական նշանակության մի շարք այլ տարրեր՝ սելեն, թելուր, բիսմուտ, կադմիում, ինդիում, գալիում, գերմանիում, բերիլիում, ցիրկոնիում, տանտալ և այլն, որոնց կորհզումը կարող է կրկնապատկել ու բազմապատկել լեռնահանքային (լեռնամետալուրգիական, եթե դա կառուցվի) ձեռնարկության արդյունավետությունը: Գրվածը հիմնավորելու համար բերենք ազնիվ մետաղների այսօր իսկ շահագործվող հանքավայրերի ընդերքի պարունակությունների տվյալները:

ՍՈՏՔԻ ՀԱՆՔԱՎԱՅՐ: Սոտքի հանքավայրի հետախուզված հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է՝ ոսկունը 165.220 կգ (24139 հազ. տ հանքաքարերում), արծաթինը՝ 181,3 տ (20922 հազ. տ հանքաքարերում), թելուրինը՝ 145,4 տ (7642 հազ. տ հանքաքարերում): Օգտակար տարրերի միջին պարունակությունը նշված հաշվեկշռային պաշարներում կազմում է ոսկունը 6,84 գ/տ, արծաթինը՝ 8,66 գ/տ, թելուրինը՝ 19,02 գ/տ: Սոտքի հանքավայրի հետախուզման ընթացքում՝ հետախույզ երկրաբանների կողմից արհամարվել են ոսկու և արծաթի հետ հարակից տարածված շատ արժեքավոր այնպիսի տարրեր, որպիսիք են սելենը, բիսմուտը, կադմիումը, ինդիումը, գալիումը, բերիլիումը, ցիրկոնիումը և տանտալը, հետևապես և դրանց պաշարները չեն հաշվարկվել ու չեն գնահատվել Պաշարների պետական հանձնաժողովի կողմից: Սակայն նշված տարրրեի զգալի (կորզելի) պարունակություններ են հայտնաբերվել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի երկրաբանության ինստիտուտի գիտնականների կողմից: Վերջիններիս տվյալները հիմք ընդունելով մենք հաշվարկել ենք նշված տարրրեի քանակները Սոտքի հանքավայրի ընդերքում և դրանք վերագրել ենք կանխատեսումային ռեսուրսներին, որոնք կազմում են՝ ոսկունը 168361 կգ, արծաթինը՝ 185,9 տ, սելենինը՝ 1738,0 տ, թելուրինը՝ 1062,2 տ, բիսմուտինը՝ 79662,0 տ, կադմիումինը՝ 2124,3 տ, ինդիումինը՝ 2414,0 տ, գալիումինը՝ 144,84 տ, բերիլիումինը՝ 144,84 տ, ցիրկոնիումը՝ 24622,8 տ, տանտալինը՝ 24622,8 տ:

Սոտքի հանքավայրի ընդերքի հարստությունների՝ հաշվեկշռային պաշարների և կանխատեսումային ռեսուրսների ընդհանուր արժեքը կազմում է 6,318 մլն դոլար (ԱՄՆ), որից ազնիվ մետաղներինը՝ 2,314 մլն դոլար, իսկ վերջիններիս հետ հարակից տարածված 9 տարրերինը՝ 4,003 մն դոլար: Այստեղից ակնհայտ է դառնում, որ Սոտքի հանքավայրում ոսկու և արծաթի հետ հարակից տարածված տարրերը իրենց արժեքով մոտ 1,73 անգամ գերազանցում են հիմնական տարրերի՝ ազնիվ մետաղների արժեքին և դրանց՝ ազնիվ մետաղների հետ համաչափելի աստիճանի կորզման դեպքում լեռնամետալուրգիական ձեռնարկության արդյունավետությունը կարող է մեծանալ նույնքան անգամ:

Այստեղ հարցը ոչ այնքան ձեռնարկության արդյունավետության մեծացմանն է վերաբերում, չնայած դա շատ կարևոր հանգամանք է, որքան.

1. այդ շատ արժեքավոր, տեխնիկայի ու արդյունաբերության բազմազան ճյուղերում լայն կիրառություն ունեցող, կարևորագույն տարրերի փոշիացմանն ու անտեղի կորստին,

2. բնական միջավայրի աղտոտմանը ծանր մետաղների (բիսմուտի, կադմիումի, ինդիումի, թալիումի) ու բուսահարույց հատկություններով օժտված տարրրեի (սելենի, թելուրի, կադմիումի, բերիլիումի) թափոններով:

Անհրաժեշտ է նշել, որ ԽՍՀՄ-ի տարիներին, Սոտքի՝ հանքավայրի շահագործման՝ հանքաքարերի արդյունահանման ու Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում վերամշակման ժամանակ ոսկու կորզումը հանքաքարերից միջին հաշվով կազմել է 70-75 %, երբեմն դրանից էլ ավելի պակաս (պատճառները մի քանիսն են, որոնց մասին այստեղ չենք ցանկանում նշել): Դա նշանակում է, որ մեծ ծախսերի գնով արդյունահանված հանքաքարերից թափոնակույտեր են թափվել և որոշակի չափերով «շեղ» ճանապարհով գնացել ոսկու 25-30 տոկոսը, այն դեպքում, երբ մշակված տեխնոլոգիաների համաձայն ոսկու կորզումը Արարատի ֆաբրիկայում պետք է կազմեր 95,6-ից մինչև 96,5 % (միջինը՝ 96,2 %): Միևնույն ժամանակ անհարժեշտ ենք համարում նշել, որ ԱՄՆ-ի և Կանադայի նույնանման ֆաբրիկաներում 1975 թ. տվյալներով ոսկու կորզումը՝ 4-9 գ/տ պարունակության հանքաքարերից, կազմել է 94-96 %, իսկ այժմ (1999 թ. տվյալներով) այդ կորզումը կազմում է 96,9-98,4 % (միջինը՝ 97,65 %):

Սոտքի և Մեղրաձորի հանքաքարերի մշակումը Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում, ԽՍՀՄ-ի օրոք, կատարվում էր համատեղ՝ բովախառնուրդի տեսքով: Կարծում ենք, որ մեր կանադացի ու հնդկացի «եղբայրները» այժմ նույնպես են վարվելու:

Մեղրաձորի հանքավայրից նախատեսվում է տարեկան արդյունահանել մոտ 200 հազ. տ հանքաքար: Պաշարների նոր (2001 թ.) հաշվարկի հիման վրա արդյունահանված «ապրանքային» հանքաքարերում՝ 40 % աղքատացման պայմաններում, ոսկու միջին պարունակությունը կազմելու է 11,62 գ/տ, իսկ արծաթինը՝ 13,2 գ/տ:

Սոտքի հանքավայրից՝ «Արարատի ոսկու արդյունահանման ընկերության» Սոտքի ոսկեհանքերի տնօրենի հայտարարության համաձայն, տարեկան արդյունահանվելու է 2003 թ.՝ 500 հազ. տ, 2004 թ.՝ մեկ մլն տ հանքաքար: «Ապրանքային» հանքաքարերում ոսկու միջին պարունակությունը, դարձյալ նույն հայտարարության համաձայն, կազմելու է 5,27 գ/տ, արծաթինը՝ 7,0 գ/տ:

Ազնիվ մետաղները 95 տոկոսով կորզելու դեպքում (նախագծով նախատեսվածից նույնիսկ 1,2 տոկոսով պակաս), երկու հանքավայրերից համատեղ կորզված մետաղների քանակը կարող է կազմել 2003 թ.՝ ոսկունը 4810 կգ, արծաթինը՝ 5833 կգ, 2004 թ.՝ ոսկունը 7218 կգ, արծաթինը՝ 9158 կգ, հետագա տարիներին՝ 2005-2010 թթ., Սոտքի հանքավայրից 2,0 մլն տ հանքաքար արդյունահանելու դեպքում կորզված մետաղների քանակը կարող կազմել՝ ոսկունը 12225 կգ, արծաթինը՝ 18505 կգ:

⇨ 5

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Օ՜ֆ, այդ միգրենը

Գործնական և տեսական բժշկության զարգացման հետ, ավելի հստակ ու ըմբռնելի են դառնում մեր պատկերացումները տարբեր հիվանդությունների վերաբերյալ: Իսկ որքան լայն ու ճշմարտացի են այդ գիտելիքները, այնքան ճիշտ ու դյուրին է դառնում հիվանդության ախտորոշումն ու բուժումը:

Աշխարհի միլիոնավոր մարդիկ տառապում են գլխացավերից, բայց միշտ չէ, որ հիվանդը գիտի իր ճշգրիտ ախտորոշումը: Շատ ծանոթ են դեպքեր, երբ գլխացավով տառապողը մտնում է դեղատուն ու հարցնում.

- Գլխացավի դեղ եմ ուզում, ինչ պատահի, միայն թե գլխացավս անցնի:

Ու հաճախ էլ նրան առաջարկում են ցավազրկող՝ անալգետին որևէ հաբ: Թե դեղատան աշխատողը, թե հիվանդը չեն էլ փորձում պարզել գլխացավի պատճառները: Հաճախ կրկնվող գլխացավը, ծոծրակի շրջանում կրկնվող ցավերը միգրենի նշաններ են, որոնք պահանջում են բժշկական լուրջ միջամտություն: Աշխարհի շատ զարգացած երկրներում միգրենի առաջացման պատճառների և նրա բուժման միջոցների լուրջ ուսումնասիրություններ են կատարվում: Վերջին շրջանում բժշիկները եկել են այն համոզման, որ միգրենը նևրոլոգիական հիվանդություն է, նրան բնորոշ բոլոր արտահայտություններով՝ գլխացավեր,

ծոծրակի մասում սպազմատիկ երևույթներ, սրտխառնոց, անաշխատունակություն: Այժմ, երբ որոշակի է հիվանդության նևրոլոգիական բնույթը, բուժումը ավելի նպատակասլաց ու արդյունավետ դարձնելու հեռանկարներ են բացվում, միլիոնավոր մարդկանց ազատելով տառապանքներից ու նրանց վերադարձնելով ստեղծագործական ու արտադրական ակտիվ գործունեության:

Ոսկե պատկանում մեր ոսկին

Նշենք, որ Սոտքի հանքավայրից արդյունահանված «ապրանքային» հանքաքարերում (ստորերկրյա և բացահանքերից հավասար քանակներով) ոսկու և արծաթի միջին պարունակությունը՝ հանքաքարերի 10 տոկոսով աղքատացման դեպքում, իրականում ավելի բարձր պետք է լինի, քան ոսկեհանքերի տնօրենի կողմից հայտարարված 5,27 գ/տ է: Այն իրականում պետք է կազմի՝ ոսկունը 6,16 գ/տ, արծաթինը՝ 7,79 գ/տ: Հետևապես կորզված մետաղների քանակը իրականում կարող է կազմել 2003 թ.՝ ոսկունը 5138 կգ, արծաթինը՝ 6208 կգ, 2004 թ.՝ ոսկունը՝ 8919 կգ, արծաթինը՝ 9908 կգ: Հետագա տարիներին, երբ Սոտքի հանքավայրից հանքաքարերի արդյունահանման քանակը կհասցվի 2,0 մլն տ, կորզված մեհաղների քանակը կարող է կազմել՝ ոսկունը 13915 կգ, արծաթինը՝ 17309 կգ:

ՄԵՂՐԱԾՈՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ: Մեղրածորի հանքավայրը հանդիսանում է ոսկու պարունակությամբ ամենահարուստ հանքավայրը Հայաստանում: Հանքավայրի հետախուզված հաշվեկշռային պաշարները՝ 2002 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են՝ հանքաքարերինը 1440 հազ. տ, ոսկունը՝ 21324 կգ, արծաթինը՝ 25,2 տ, թելուրինը՝ 31,2 տ (1397 հազ. տ հանքաքարերում): Ոսկու միջին պարունակությունը հաշվեկշռային ողջ պաշարներում կազմել է 15,98 գ/տ, արծաթինը՝ 18,6 գ/տ, թելուրինը՝ 21,4 գ/տ: Այստեղ նույնպես հետախույզ երկրաբանների կողմից ոսկու և արծաթի հետ հարակից տարածված տարրերի մեծ մասը չի հայտնաբերվել ու չի գնահատվել: Սակայն դրանք հայտնաբերվել են գիտական երկրաբանների (Շ. Ամիրյան, Ա. Կարապետյան, 1964) կողմից, իսկ մեր կողմից հաշվարկվել են դրանց ռեսուրսները (հանքաքարերի, ոսկու և արծաթի կանխատեսումային ռեսուրսները գնահատվել են հետախույզ երկրաբանների կողմից, որն էլ մենք մեր հաշվարկներում ընդունում ենք որպես հիմք): Հանքաքարերի կանխատեսումային ռեսուրսները կազմում են 2160 հազ. տ, ոսկունը՝ 31000 կգ (միջին պարունակությունը՝ 14,35 գ/տ), արծաթինը՝ 37,0 տ (միջին պարունակությունը՝ 17,13 գ/տ), սելենինը՝ 17,06 տ, թելուրինը՝ 3875,0 տ, բիսմուտինը՝ 72,0 տ, կադմիումինը՝ 519,0 տ, գալիումինը՝ 3,06 տ, ինդիումինը՝ 3,96 տ, գերմանիումինը՝ 2,95 տ:

Մեղրածորի հանքավայրի ընդերքի հարստությունների հաշվեկշռային պաշարների և կանխատեսումային ռեսուրսների արժեքը կազմում է 627 մլն դոլար, որից ազնիվ մետաղներինը՝ 521 մլն դոլար, իսկ հարակից տարածված տարրերինը՝ 107 մլն դոլար:

Հայաստանում արդեն իսկ բոլորին է հայտնի, որ Սոտքի և Մեղրածորի հանքավայրերի շահագործման իրավունքը ձեռք է բերել կանադական «FDM» ընկերությունը, որին դուր չի եկել Մեղրածորի հանքավայրում ազնիվ մետաղների «ցածր» պարունակությունը և նրա պահանջով ու հայ մասնագետների կատարմամբ Մեղրածորի հանքավայրի արդյունահանման ենթակա պաշարները վերահաշվարկվել են (համարյա կրկնակի անգամ նվազեցվել են հանքաքարերի և ազնիվ մետաղների պաշարները, և՝ 3,4 գ/տ-ով ավելացվել են ազնիվ մետաղների պարունակությունը): Այդ վերահաշվարկի հիման վրա Մեղրածորի հանքավայրից արդյունահանման ենթակա ոսկու պաշարները կազմում են 12103 կգ, իսկ արծաթինը՝ 13711 կգ: Դրա հետ մեկտեղ ընդերքում՝ շարագործումից առաջացած լաբիրինթոսներում, թողնվելու են ոսկի 9221 կգ, արծաթ՝ 11489 կգ դրանց հետ հարակից տարածված բոլոր տարրերով հանդերձ: Սա դեռ չարիքի փոքրագույնն է: Առավել վատն այն է, որ արդյունահանված հանքարարերից կորզվելու են ոսկին ու արծաթը, իսկ վերջիններիս հետ հարակից տարածված տարրերը՝ ծորերն ու գետերն են թափվելու:

«Դելավոյ էքսպրես» (11 մայիսի 2002 թ.) հանդեսին «Արարատի ոսկու

արդյունահանման ընկերության» Սոտքի ոսկեհանքերի տնօրեն պարոն Արտավազդ Մովսիսյանի տված հարցազրույցի ժամանակ «Արտադրանքի ինքնարժեքի 50 % կազմում է հանքաքարերի փոխադրումը մինչև Արարատի ոսկու կորզման ֆաբրիկա», և ավելացնում է. «Կա նախագիծ Սոտքում ֆաբրիկա կառուցելու համար, որն այժմ հետազոտվում է»:

Ի՞նչն է հետազոտվում, ո՞ւմ կողմից և ինչո՞ւ է հետազոտվում: Չէ որ նման նախագիծը քննարկման և հետազոտման առարկա հանդիսանալ չի կարող: Ոսկու կորզման ֆաբրիկայի տեղի ընտրության հարցը քննարկելիս եղել են բազմաթիվ առաջարկություններ, այդ թվում նաև նման՝ Սոտքում կառուցելու, առաջարկություն՝ (այո՝ միայն և միայն առաջարկություն, այլ ոչ թե նախագիծ), որը կտրականապես մերժվել է:

Մեզ հայտնի է, որ մեր կառավարությունը արտասահմանցիներին թույլատրում է անել ամեն ինչ, բայց այս մեկը՝ Սոտքում Սևանի ավազանում ոսկու կորզման ֆաբրիկայի կառուցման թույլտվությունը, կարող է կործանարար լինել հայ ժողովրդի համար, թշնամություն ու դավաճանություն այդ ժողովրդի հանդեպ: Այժմ հիմնավորենք գրվածը.

1. Հայաստանում համարյա բոլորին է հայտնի (համենայն դեպս Գեղարքունիքի մարզի և հարակից տարածաշրջանների ողջ բնակչությանը և հարցին առնչվող մարդկանց), որ Սևանի ափերով ծգվող երկաթգիծը, որով էլ Սոտքի հանքավայրի ընդերքից արդյունահանված հանքաքարերը փոխադրվում են Արարատի ոսկու կորզման ֆաբրիկա, կառուցվել է հիմնականում հենց այդ նպատակով: Դրա հետ մեկտեղ, այժմ արդեն, նշված երկաթուղին Գեղարքունիքի մարզի և հարակից տարածաշրջանների համար դարձել է ռազմավարական նշանակություն օբյեկտ, հետևապես այդ երկաթուղին, իր բոլոր ենթակառուցվածքներով հանդերձ, պետք է գործի և պետք է բեռներ ու ուղևորներ փոխադրի, այդ թվում, և առաջին հերթին, ոսկեբեր հանքաքարեր, թեկուզև հենց այն պարզ պատճառով, որ այդ ճանապարհով բեռնափոխադրումների «առյուծի բաժինը» պատկանում է ոսկեբեր հանքաքարերին: Վերջիններիս փոխադրման դադարեցումը կարող է բերել նրան, որ այդ երկաթուղին կդառնա ոչ արդյունավետ և կդադարի գործել ընդհանրապես:

Պարզ ու հասկանալի է մի բան՝ բոլորը, այդ թվում նաև «FDM» ընկերությունը, ձգտում են փոքր ներդրումներով մեծ շահույթ ստանալ: Բայց հայտնի է նաև մեկ այլ բան՝ նշված ընկերության շահից բացի գոյություն ունի նաև Հայաստանի ոսկեհանքերի տիրոջ՝ հայ ժողովրդի (հայկական պետության) շահը և, որքան էլ որ մենք հրապուրվենք տվյալ գործի (ոսկեհանքերի շահագործման) համար կատարվող ներդրումների գումարով, այնուամենայնիվ, չպետք է անտեսենք մեր ժողովրդի շահը: Երկաթուղին պետք է գործի, դրանով ուղևորների և այլ բեռների հետ միասին ոսկու և արծաթի հանքաքարեր պետք է փոխադրվեն և վերջիններիս համար էլ վճարումներ պետք է կատարվեն: Այդպես պետք է լինի անկախ այն բանից դուր է գալիս դա «FDM» ընկերությանը, թե՝ ոչ:

2. Ինչպես հայտնի է Արարատի ֆաբրիկայում՝ ոսկու կորզման տեխնոլոգիայում, կիրառվում է ցիանացման եղանակը, իսկ կալիումի և նատրիումի ցիանիդները շատ ուժեղ թույներ են (մարդու համար մահացու ազդեցություն կարող է ունենալ կալիումի ցիանիդի նույնիսկ անշան 0,085 մգ քանակը): Եթե նույնիսկ ոսկու կորզման համար մշակվի բոլորովին նոր՝ մինչև այժմ անհայտ տեխնոլոգիա և բացառվի ցիանացման եղանակը, դարձյալ չի կարելի թույլատրել, որ մշակված թափոնապոչերը «պահեստավորվեն» Սևանի ավազանում (իսկ դա այլ կերպ հնարավոր չէ, քանի որ թափոնապոչերի քանակը կազմում և կազմելու է արդյունահանված և մշակված հանքաքարերի ավելի քան 99,9 % և դրանց փոխադրումը այլ վայրեր համարժեք կարող է լինել հանքաքարերի փոխադրմանը): Մեկ անգամ ևս նշենք, որ ազնիվ մեհաղների հետ հարակից տարածված տարրերից մի քանիսի (սելենի, թելուրի, կադմիումի և բերիլիումի) նույնիսկ միացությունները, որոնք Սոտքի և Մեղրածորի հանքաքարերում ունեն բավականաչափ բարձր պարունակություն, ունեն նաև խիստ թունահարույց հատկություններ: Դրանք մթնոլորտային տեղումների, արևի և օդի թթվածնի ազդեցության ներքո աստիճանաբար կարող են տարրալուծվել, դուրս բերվել թափոնապոչերից և ներծծվելով գրունտների մեջ, գրունտային ջրերի հետ համատեղ, տարածվել դեպի Սևան ու թունավորել ինչպես Սևանի ջուրը, այնպես էլ շրջապատը: Իսկ թե ինչ աղետ տեղի կունենա դրա հետևանքով, պարզ ու հասկանալի է ամենքին:

Եզրակացություններ

Հանրահայտ է, որ ոսկեհանքերի շահագործումը, դարերից ի վեր, համարվել և համարվում է մեծ շահութաբերություն խոստացող ճյուղեցից մեկը: Այսպես օրինակ, Մեղրածորի հանքավայրի 2001 թվականի պաշարների վերահաշվարկի հիմքում դրված տեխնիկատնտեսական հաշվարկով հաստատվել է, որ այդ հանքավայրի շահութաբերությունը կազմում է կորզվող արժեքի 64,59 տոկոսը, այն էլ այն դեպքում, երբ հանքաքարերից կորզվում են միայն ազնիվ մետաղները: Այդ շահութաբերությունը շատ ավելի մեծ կարող է լինել, եթե կորզվեն ոսկու և արծաթի հետ համալիր տարածված բոլոր օգտակար տարրերը: Բայց, մեծ շահութաբերությունը չպետք է շլացնի հանքավայրեր շահագործող գործարարներին և առիթ չպետք է հանդիսանա, որպեսզի այդ գործարարները վատնեն ու փոշիացնեն մեր հայրենի ընդերքի, ամբողջ բնակչությանը պատկանող հարստությունները, դրանք ծորերն ու գետերը թափեն և աղտոտեն ու թունավորեն հայրենի բնությունն ու բնական միջավայրը: Մենք բոլորս այս երկրում ենք ապրում, հետևապես թե՝ բնական հարստությունները և թե՝ բնական միջավայրը (օդը, ջուրը, բուսական ու կենդանական աշխարհը) մեր բոլորինն են՝ հավասար, ուստի հենց մենք էլ պետք է կանխենք մեր բնական հարստությունների թալանն ու փոշիացումը: Չպետք է թույլ տանք, որպեսզի օտարներն ու ոմանք հարստանան մեր և մեր սերունդների առողջության հաշվին ու կյանքի գնով: Գտնում ենք, որ ՀՀ կառավարությունը պետք է պարտադրի բոլոր գործարարներին, որպեսզի նրանք հանքավայրերը շահագործելիս պահպանեն ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի բոլոր պահանջները, հանքավայրերը շահագործեն համալիր, անթափոն (կամ անխուսափելի սակավաթափոն) տեխնոլոգիաներով, կորզեն բոլոր օգտակար տարրերն ու մաքուր և անաղարտ պահեն բնական միջավայրը: Դրանով շատ ավելի կարող է մեծանալ լեռնահանքային ու մետալուրգիական ձեռնարկությունների արդյունավետությունը և անվտանգ կարող է մնալ շրջակա միջավայրը:

Հ. Ս. ԱՎԱԳՅԱՆ

ԱՇԳՐԱԳԱՐԶ

Մարումուկուտրույի «հետքերով»

(խոսքովանություն)

Մարումուկուտրույի «հետքերով». կարդալով այս խորագիրը, ընթերցողը կհարցնի՝ իսկ ինչո՞ւ է ՀԵՏՔԵՐՈՎ բառը չակերտների մեջ: Բանն այն է, որ իրականում ստորև հրապարակվող լուսանկարները ոչ մի կապ չունեն մեր նախկին հրապարակման հետ: Պարզապես 90-ականներին մեր նոր իշխանությունների գործողությունները շատ նման էին Ամազոնի հովտի քաղաքակրթությունից հեռու ցեղերի կենսաձևին, որն էլ մեզ ստիպեց դիմել այլաբանության և Հայաստանում տիրող վիճակը ներկայացնել որպես ջունգլիներում ապրող, քաղաքակրթությունից հեռու ցեղերի կենսաձևին: Փառք Աստծո, մենք հաղթահարեցինք այդ վիճակը ու եկել է պահը ընթերցողին պատմելու մեր լրագրողական հնարամտությունը: Ուզում էինք պատմել այդ մասին, բայց ահա ֆրանսիական գիտական հանդեսում հանդիպեցինք Յանումամի ցեղի կենցաղին ու որոշեցինք Ամազոնի հովտի ջունգլիներում կորած այդ ցեղի լուսանկարները հրապարակելով հիշեցնել գոյություն չունեցող մարումուկուտրու ցեղի մասին: 90-ականներին թեև չկար գրաքննություն, բայց իշխող բարքերի մասին գրելիս ոչ մի կերպ չկարողացանք հեռանալ ջունգլիներից ու ահա տեսնելով իսկական ջունգլիներում ապրող իսկական «մարումուկուտներին», իրականում Յանու-մամիներին, որոշեցինք մեր ընթերցողներին ցույց տալ այդ ամենը և զգուշացնել, թե ինչպես կորցնելով մարդկային բարոյական դեմքը, մարդը կարող է բազմահարկ բարեկարգ բնակարանի ու շքեղ ավտոմեքենայի գոյության պայմաններում ապրել յանումամիների բարքերով:

Գուցե հենց դա էր պատճառը, որ հրապարակելով «Մարումուկուտրու» ցեղի գաղտնիքը» հոդվածը, մենք ոչ մի ահազանգ չստացանք մեր ընթերցողներից, թե ովքե՞ր են նրանք, ո՞ր աշխարհամասում են ապրում, ո՞ր ցեղին են պատկանում, չնայած մեր ընթերցողների զգալի մասը պատմաբաններ են, աշխարհագրագետներ, մարդաբաններ, աշխարհ տեսած մարդիկ: Մնում է ավելացնել այս ամենին, մեր մեկնաբանությունզգուշացումը. սիրելի ընթերցող, պարզապես պետք է խոստովանենք, որ քաղաքակրթությունից դեպի «ջունգլիներ» ընդամենը մի քայլ է... Ոչ ավելին: Այդ է պատճառը, որ ոչ մի արտառոց հրապարակում ոչ ոքի չի զարմացնում:

ԳԱՐԾԻՔ

Նախազգացում

Էլեկտրամագնիսական դաշտում տեղավորված մարդը սկսում է լուսարձակել: Լուսանկարի վրա հստակ երևում է այդ շողարձակումը, մարդու ամբողջ կերպարանքը պարուրված է փայլող լուսապսակով: Կարծիք կա, որ այդ լուսարձակումն էլ հենց մարդու էությունն է. այն նաև կոչում են աուրա-լուսապսակ: Իսկ որոշ էքստրասենսներ ասում են, որ դա ոչ թե լոկ մարդու կենսաէներգիան է, այլ հենց ինքը՝ մարդկային հոգին:



Եվ եթե մարդը մահանում է, այդ նրա հոգին է էներգիայի փնջի տեսքով հեռանում երկինք: Համենայն դեպս հաստատված է, որ մեռած մարմինները էլեկտրամագնիսական դաշտում չեն լուսարձակում:

Հոգեկան էներգիան սնվում է երկու աղբյուրներից, որոնցից մեկը գալիս է տիեզերքից, իսկ մյուսը՝ երկրից: Ըստ որում, հողից ստացված էներգիան առաջացնում է մարմնական ցանկությունները, իսկ տիեզերքից եկածը՝ հոգեկան:

Ռուս նշանավոր գիտնական Վերնադսկին դեռ 20-րդ դարի սկզբին կառուցեց ուսմունք նոոսֆերայի՝ բիոսֆերայի էվոլյուցիոն նոր վիճակի մասին, որը ստեղծվում, ձևավորվում է մարդու բանական գործունեության արդյունքում: Իսկ ինչո՞ւ չենթադրել, որ երկիր մոլորակը շրջապատված է տիեզերական մի բանականությամբ (գիտակցությամբ), որը ինչ-որ ձևով համագործակցում, հաղորդակցվում է յուրաքանչյուր ապրող կամ մեռած մարդու բանականության, գիտակցության հետ:

Եվ այդ համագործակցությամբ, փոխադարձ կապով պետք է բացատրել նախազգացում (ինտուիցիա) երևույթը:

Ասենք թե դուք նպատակադրվել եք գնալ որևէ տեղ. ահա գալիս է ժամանակը, և ձեր մեջ ընդվզում է ինչ-որ բան՝ չեք ուզում գնալ: Բայց երբ, այնուամենայնիվ, գնում եք, ձեզ հետ դժբախտություն է պատահում: Եվ միայն այդ ժամանակ հիշում եք, թե ինչպես դուք չէիք ուզում գնալ:

Այո, դա էներգետիկ նախազգուշացումը, վերը նշված տիեզերական բանականության աղբյուրն էր հուշում ձեզ չգնալ: Եվ, զուր չէ, որ կան հավատալիքներ՝ պահապան հրեշտակների մասին: Չէ՞ որ այդ հրեշտակը կարող է լինել էներգետիկական ամպիկը:

Եվ պատահական չէ, որ իրենց հույսը, սպասելիքները երկնային ուժի, տիեզերական բարձրագույն բանականության վրա դնում են ավելի շատ այն մարդիկ, որոնք ապրում են հոգևոր ձգտումներով: Դժբախտություններից, ամեն տեսակի փորձանքներից մարդիկ հաճախ փրկվում են ինտուիցիայի, նախազգացման շնորհիվ: Պատմությունը բազում-բազում այդպիսի փաստեր է արձանագրել և դեռ արձանագրելու է: Եվ այն էներգիայի աղբյուրը կամ ազդանշանը, որ մարդն ստանում է տիեզերական բարձրագույն բանականությունից կամ իր պահապան հրեշտակի միջոցով, կարող է լինել նաև վաղուց մահացած մեկը, որը անչափ սիրել է քեզ և իր պարտքն է համարում դժբախտություններից պահպանել քեզ:

Ճշմարի՞տ է արդյոք այս տեսակետը, դժվար է միանշանակ պատասխան տալ: Սակայն գիտությունն էլ առանձնապես ջանք չի թափում հերքելու սույն վարկածը: Գուցե իսկապես մեզնից վեր կա այդ տիեզերական բարձրագույն բանականությունը և կան պահապան հրեշտակները, որ հուշում, նախազգուշացնում են մեզ ինչ-որ փորձանքներից: Եվ ոչինչ, որ այդ ամենը մենք անվանում ենք ինտուիցիա (նախազգացում), միայն թե թող շուտ-շուտ մեզ սատար լինի այդ ինտուիցիա-պահապան հրեշտակը:

ՏԵՂԵԿ

Թեև ուշացումով, ժողովուրդն իմացավ, որ ինքը մի քանի օր կեղտաջուր է խմել, հիվանդացել է, տագնապներ ապրել: Ոչինչ, որ մենք այնքան ամբարտավան ու լկտի ենք դարձել, որ կարող ենք աշխարհով մեկ ասել՝ հային բան չի լինի: Բայց եղավ... Հիվանդացան, հիվանդանոց ընկան ու... Բուժվեցին: Ո՞ւմ մեղքով, իհարկե, ջրամատակարարների: Ոչ մի տարի, ոչ մի տարածքում այդքան ջրաչափ չվաճառվեցին, այդքան ջրավարձ չհավաքեցին, որքան Հայաստանում, համենայնդեպս՝ Երևանում: «Ա՜խ, իմ հայրենիքի ջուրը»,- կասեր, կերգեր Ջիվանին:

Երևանյան ջրի համբավը, որն այդպե՞ս տարածվել էր աշխարհով մեկ, համարյա կորցրել է իր դժվարությամբ ձեռք բերված համբավը: Բանն այն է, որ նախ, երևանյան ջրին խառնվեցին այլ ջրեր, հետո այն դարձավ ժամով, րոպեով, հետո նորից ժամով, իսկ որոշ դեպքում՝ նաև օրով: Բայց խոսքն ամենևին այդ մասին չէ: Ճիշտ 30 տարի առաջ, անդրադառնալով ջրի պրոբլեմին, «Ավանգարդ» թերթում գրվեց, թե կգա մի օր, որ ջուրը կվաճառվի խանութում՝ մեծ ու փոքր շշերով: Այդ օրը եկավ: Այժմ երևանյան սովորական ջրով շշերի բազմազանությունից ու խայտաբղետությունից պեսպեսին են տալիս խանութներն ու մերձխանութային տարածքները: Ի՞նչ կլինի սրա վերջը...

Մտածում են քաղաքացիները, որոնց իշխանությունները խոստանում էին շուրջօրյա ջուր տալ, եթե տեղադրեն ջրաչափերը: Տեղադրեցինք... Բայց հենց ավարտվեց գործընթացը, երևանյան ջուրը «վարակվեց»: Այդ մասին երևանցիներն իմացան, երբ մի քանի օր խմեցին գարշահոտ ջուրը. շատերը ընկան հիվանդանոց և տագնապը ահագնացավ: Կարծես ծրագիրը նպատակին հասավ, տագնապահար ժողովուրդը խանութներից «թալանեց» «Նոյն» ու «Բյուրեղը», «Ապարանն» ու չգիտեմ էլի ինչ ջրերը: Տագնապը ավելի խորացավ, երբ հիվանդանոցներում ավելացան «աղիքա-ստամոքսային» տրակտի հիվանդները, իսկ ջրի վարակի պատճառները հայտնաբերելու ու դրա դեմն առնելու գործընթացը (եթե այն կա) արդյունք չի տալիս: Գարշահոտությունն ու վարակը նորանոր տարածքներ են գրավում, ու համաչափորեն ավելանում են «մահճակալ-հիվանդները» հիվանդանոցներում:

Ու չնայած տագնապին, իշխանական որևէ մարմին կամ անհատ ժողովրդին չդիմեց բացատրությամբ՝ մխիթարող կամ զգուշացնող խոսքով: Ոչ ոք չանհանգստացավ, երբ վարակը սկսվեց Արաբկիրում, ներգրավեց իր տարածքում Կոմիտասի, Բաղրամյանի, Օրբելու, Կիևյան փողոցները, հասավ Կենտրոն:

Վարակը հասավ հանրապետության նախագահի պալատը, Գիտությունների ազգային ակադեմիա, մեծատաղանդ ֆիզիոլոգ Օրբելու անվան փողոցին, սպառնաց մեր ազգային անվտանգությանը՝ ներառելով մեր Ազգային ժողովը:

Եթե չբացառենք այն կասկածը, որ տագնապի հեղինակները ջրավաճառներն ու շշերով ջուր արտադրողներն են, որոնք սադրանքի արդյունքում ահռելի եկամուտ ստացան, ապա ասենք նաև, որ շշերով ջրի նկատմամբ էլ վստահությունն այնքան է ընկել, որ ոչ հեռավոր ապագայում այն շուկա է կորցնելու, քանզի հայտնի չէ, թե անվստահությունը շուկայի նկատմամբ դեռ որքան կտևի ու ինչ չափերի կհասնի:

Ուրեմն՝ ի՞նչ... էլի ինչ օրին ու սադրանք պետք է ակնկալենք, որ ամեն մի ծառայություն, բժշկա-սանիտարական համակարգ, բազմաթիվ հսկող, կանխող, ահազանգող մարմին իր գործն անի ու չլռի: Ավելին, մենք՝ շարքային մահկանացուներս, սարսափեցինք, երբ Ազգային ժողովի պատգամավորներից մեկը առաջարկեց քննարկել այդ տագնապահարույց իրավիճակը, իսկ նախագահությունից հնչեց խիստ մեղադրանք՝ մեր գործը օրենսդիր գործունեությունն է և ոչ թե ջրի վարակահարույց վիճակը:

Պարոն պառլամենտ, երբ վաղը մեկ այլ հարուցիչ հայտնվի ջրատարում, և վարակի ճիրաններում խեղդվի քո ժողովուրդը, քո «օրենսդիր գործունեությունը» ոչ ոքի այլևս պետք չի լինի: Ո՛չ, հազար անգամ՝ ո՛չ... Մեր այս տողերը դեմագոգիա չէ, այլ անհանգստություն է, առավել ևս, որ դեմագոգիայով մենք չենք կարող գերազանցել պառլամենտին: Պարզապես մեր գլխին շատ օրիններ են կախված: Երևանում, երթուղային տաքսիներում (գիտենք՝ ջրի հետ կապ չունի) ուղևորների քանակը ոստիկանությունը սկսեց ստուգել, երբ վթարից մարդիկ զոհվեցին... Բայց չէ՞ որ վարորդները իրենց հարցերը կլուծեն ոստիկանության հետ, և մեկ ամիս հետո ամեն ինչ, այդ թվում և զոհերը, կմոռացվեն: Բայց ո՞վ պատասխան պետք է տա այն վիճակին, որ քաղաքում համարյա վերացել է հասարակական տրանսպորտը, և ժողովուրդը մնացել է երթուղայինների հույսին, որոնք գերծանրաբեռնված են առավոտյան ու երեկոյան, իսկ հիմա՝ նաև կեսօրին:

Հիմա այդ տրանսպորտն աշխատում է «թույլատրելի» բեռնվածությամբ, չկա տրամվայը, հատուկենտ են տրոլեյբուսները: Ժողովուրդը մոռացել է ավտոբուսի մասին: Իսկ ինչ-որ տեղ, ինչ-որ ձևով ուզում են վերացնել ծգնաժամը, որը ստեղծել են իրենք տարիների ընթացքում: Դե, ոչինչ, հայը դիմացկուն է, «էսպես էլ մնա լավ է, միայն կռիվ չլինի»:

Հիմա՝ նորից ջրի մասին: Հերիք է ջուր ծեծենք... Ժամանակն է ջրի հարցը վստահել լուրջ մարդկանց, ովքեր կբացառեն նման վթարը կամ ծայրահեղ դեպքում՝ գոնե մաքուր ջուր կմատակարարեն բնակիչներին, մինչև վթարը վերացվի: Չի կարելի կատակի վերածել տագնապը, անվերջ կրկնելով, թե «հայերը դիմացկուն են և հանդուրժող»: Չէ՞ որ այդ երկուսն էլ՝ դիմացկանությունն ու հանդուրժողականությունն էլ, չափ ու սահման ունեն: Բայց կգտնվի՞ Հայաստանում քաղաքական գործիչ (գոնե մեկը), մեծահարուստ գործարար, հեղինակավոր գիտնական (գոնե մեկը), որ տագնապի ծայն բարձրացնի: Ծիծաղելի է, երբ վերջին շրջանում բազմապատկված մահացության մեղքը գցում են արևի ակտիվության վրա ու չեն տեսնում միլիոնանոց քաղաքի վարակման փաստը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր դժվար ժամանակների մեծ հայը

Մեսրոպ արքեպիսկոպոս Աշչյանի անժամանակ մահը համազգային կորուստ էր: Դժվար տարիներին նա փութաց մայր հայրենիք՝ իր ծառայությունը մատուցելու նեղ կացության մեջ հայտնված հարազատ ժողովրդին, հոգեկան նեցուկ լինելու ծրագրով:

Աստվածաընտիր հոգևորականը հիրավի երևույթ էր՝ օժտված ջերմ հայրենասիրությամբ, բացառիկ կարողություններով: Նրա մատուցած ծառայությունները մայր հայրենիքին բազմապիսին էին, բոլորն էլ արդյունավետ, հիշարժան:

Թեև ստիպված էր հանդես գալ որպես Մուղնու վանքի վանահայր, սակայն կարողացավ ծավալել բացառիկ բազմաբովանդակ գործունեություն՝ ի շահ հարազատ ժողովրդի, հայրենիքի:

Սկսենք Մողնու վանքից, ուր համատեղ մեկնեցինք: Սոռացության տրված ուշ միջնադարյան այդ վանքային համալիրը անճանաչելի էր դարձել: Նրա եռանդուն ջանքերով Արագած լեռան լանջին վերագտել էր իր հոգևոր, կրոնա-դաստիարակչական դերը: Վանքատարածքում ամբողջովին խնամվել ու ծառատնկվել էր, վանքաշենքերը նորոգվել, բարեկարգվել ու կահավորվել, հիմնադրվել տարեցտարի հարստացող գրադարան:

Միաժամանակ սրբազանի ջանքերով հիմնադրվել է «Մուղնի» հրատարակչությունը: Առավել գնահատելին նրա մեծ աջակցությունն է հրատարակչական գործին: Միջնորդ ծառայելով հայրենիքի ու սփյուռքի բարերարական կազմակերպությունների ու անհատների միջև, նրա շնորհիվ հրատարակվեցին բազմապիսի ու բազմաքանակ գրքեր, բոլորն էլ հրատարակման կարոտ՝ պատմաբանասիրական, հնագիտական-ազգագրական, ճարտարապետական ու արվեստագիտական աշխատություններ, հայկական գրականության ու երաժշտական արվեստի դասականների հատորներ և այլն: Միայն ամերիկահայ բարերար Հարություն Սիմոնյանի հովանավորությամբ լույս են տեսել երեսուն մեծարժեք հատորներ: Դրանց թվին պատկանում է իմ՝ «Արվեստակից ժամանակակիցներս» մեծածավալ աշխատությունը:

Նա նաև նյութապես աջակցել է իմ ղեկավարությամբ տասնամյակներ շարունակ գործող պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերությանը, որն այժմ կանգնած է լուծարման եզրին... Դրանով նա իր գնահատակը մատուցեց այն ազգօգուտ գործունեությանը, որն ընկերությունը ծավալել է իր գործունեության բազում տարիներին: Նրա մշտական հավատամքն էր ազգային ոգու ամրապնդումը, որը գործադրում էր ազգային արվեստի տարբեր բնագավառները ոգեկոչելով: Մեծ ժողովրդականություն վայելեցին նրա նախաձեռնությամբ կազմակերպված հայկական հին երգերի փառատոները:

Հոգևոր հայրենասերը քանիցս ուղևորություններ կատարեց դեպի Արևմտյան Հայաստան (Էրզրում, Մուշ, Բիթլիս, Վան և այլուր), որոնք արհեստավարժ տեսագրությունների ու իր ոսկեզրիչ շարադրանքով մատուցվեցին աշխարհով մեկ ցրված հայությանը: Ընթերցելով իր շարադրանքներն ու դիտելով տեսագրությունները, զարմանում ես իր այցելած տարածություններում անտերունչ մնացած սրբավայրերի, նույնիսկ հուշաքարերի մասին նրա խոր իմացությունների համար:

Անձամբ ծանոթ եմ եղել հայոց բարձրաստիճան շատ հոգևորականների: Վստահորեն Մեսրոպ արքեպիսկոպոս Աշչյանը մասն է կազմում լավագույնների: Մայր հայրենիքում իր ծավալած աստվածահաճո գործունեությամբ նա արժանացավ համընդհանուր հարգանքի ու գնահատման, իսկ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2001-ին նրան շնորհեց պատվավոր դոկտորի կոչում: Նրա անժամանակ մահը սգացին նրա վաստակի երկրպագուները մայր հայրենիքում և սփյուռքում:

Բարին իր հիշատակին:

Վարազդատ Հարությունյան

ԿԱՐԾԻՔ

Սպո՞րտ, թե՞ գիտություն

Շատերն են խորհել այս հարցի շուրջը, թե ինչո՞ւ շախմատային խաղը ունի միլիոնավոր երկրպագուներ, թե ինչո՞ւ դարերի ընթացքում շախմատով հետաքրքվել են տարբեր աշխարհայացքի, բնավորության և զբաղմունքի տեր մարդիկ:

Ինչո՞ւ ամեն օր աշխարհի բոլոր անկյուններում հազարավոր շախմատիստներ համառ պայքար են մղում շախմատային խաղատախտակների վրա, ուսումնասիրում շախմատային գրականություն, շատ ժամանակ հատկացնում լուծելու կոմպոզիցիայի արվեստի գաղտնիքները:

Ինչի՞ շնորհիվ է, որ շախմատը հսկայական մասսայականություն է վայելում, շատերին ստիպում իրենց ազատ ժամանակի զգալի մասը տրամադրել նրան՝ իրենց գեղագիտական պահանջմունքները բավարարելու, հանգստի ժամերին բավականություն ստանալու համար:

Բազում այս ինչուներին պատասխանելը հեշտ չէ:

Թերևս պատճառն այն է, որ շախմատը գրավիչ մի երևույթ է՝ իր շատ հարուստ հնարավորություններով ու գաղտնիքներով:

Յուրաքանչյուրը շախմատում կարող է գտնել ինչ-որ մի բան, որն իրեն հաճելի է և գրավիչ:

Դա մտքի զվարճանք է, հանգիստ՝ աշխատանքից հետո, միաժամանակ հուզիչ մրցույթ, ազնիվ մենամարտ, մտավոր ուժերի լարված պայքար, որոնք առաջ են բերում հոգեկան ապրումներ, ինչպես սպորտի մյուս ձևերում:

Եվ վերջապես շախմատը անկասկած գեղարվեստական և գիտական ստեղծագործությունների բնագավառ է, գեղագիտական և իմացական արժանիքներով հարուստ, բավականություն պատճառող:

Ներքուստ շախմատիստը հոգեկան բավականություն է ստանում, երբ խաղատախտակի վրա իրականացվում է գեղեցիկ կոմբինացիա՝ շնորհիվ դիրքի խոր և բարդ վերլուծության, հոգեկան, տրամաբանական, մաթեմատիկական ընդունակությունների, ինչպես նաև երևակայության դրսևորման:

Դա պայքար է ոչ միայն մրցակցի, այլև ինքն իր դեմ, որը պահանջում է ստեղծագործական ուժ, հատուկ իմացական հաշվարկ, դիրքի գնահատման վառ ունակություն:

64 վանդակների վրա մարմնավորվում են ճշգրտված ռազմավարական պլաններ, տարբեր դիրքերի, մտքի, կամքի պոեզիա»:

Այս միտքը պատկանում է չիլիացի հռչակավոր բանաստեղծ Պաբլո Ներուդային:

Աշխարհի չեմպիոնների բնորոշումները՝

■ *«Ես գտնում եմ, որ շախմատը արվեստ է, և ինձ վրա եմ վերցնում այն բոլոր պարատվորությունները, որոնք դրված են սրա կողմնակիցների վրա»:*

Ալեքսանդր ԱԼՅՈԽԻՆ

■ *«Շախմատը ունի երեք կողմ՝ խաղի, գիտության և արվեստի»:*

Միխայիլ ԲՈՏՎԻՆՆԻԿ

■ *«Շախմատը նախ և առաջ արվեստ է: Այլապես ինչպես կարելի է բացատրել նրա հսկայական ձգողական ուժը, ինչո՞ւ միլիոնավոր մարդիկ խաղում են շախմատ, հազարավորները՝ կանոնավոր այցելում մրցումների, հարյուր հազարները սովորում տեսություն, սիստեմատիկ խաղարկում ուժեղագույն վարպետների պարտիաները:*

■ *Իմ կարծիքով միակ բացատրությունն այդ խաղի գեղարվեստական ազդեցությունն է»:*

Միխայիլ ՏԱԼ

■ *Շախմատը ձևով խաղ է, բովանդակությամբ՝ արվեստ, տիրապետման դժվարությամբ՝ գիտություն»:*

Տիգրան ՊԵՏՐՈՍՅԱՆ

■ *«Շախմատը, ինչպես կյանքը, համապարփակ պատերազմ է»:*

Ռոբերտ ՖԻՇԵՐ

Պատրաստեց
Ալբերտ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ
Սպորտի վարպետ

Հարձակվում է անապատը, հարձակվում է... օվկիանոսը

Համաշխարհային օվկիանոսի մասին առասպելը վաղուց դադարել է առասպել լինելուց: Բանն այն է, որ վերջին մի քանի տարում ջրհեղեղները օվկիանոսի վերածեցին Եվրոպայի հսկա տարածքներ, ջրի տակ մնացին Անգլիայի, Գերմանիայի ու Ֆրանսիայի հսկա տարածքները, ինչ կմտածի այդ տարածքի բնակիչը, եթե չունենար ինֆորմացիայի ժամանակակից հնարքներ՝ հեռուստացույց, ռադիո, մամուլ... Պիտի մտածեր, որ ջուրը ծածկել է ողջ աշխարհը: Իսկ ինչ կմտածի Սահարայի բնակիչը, երբ տարեցտարի ավազաթմբերը նորանոր հողեր են գրավում: Բնականաբար, կմտածի, որ եկել է աշխարհի վերջը, երկիրը դառնում է անպտուղ անապատ:

Իսկ ճշմարիտն այն է, որ Երկիր մոլորակի վրա կլիմայական անոմալիաները այնքան օրինաչափ են դարձել, որ առաջացնում են մարդկության տագնապը: Ջերմաստիճանի զգալի բարձրացումը բևեռներում, անապատի տարածքների ընդլայնումը, անտառային հսկայածավալ հրդեհները, գործարանային արտանետումները, օզոնային շերտի գոյացումը վկայում են, որ, այնուամենայնիվ, ինչ-որ բան փոխվում է: Ակնկալում ենք այդ հարցերի մասին մեր գիտնականների գիտական վերլուծությունները: Ցավոք, առայժմ մեր գիտնականներին ավելի շատ հետաքրքրում են խիստ հեռավոր գալակտիկաները:

Որքան էլ տարօրինակ է, աստղագիտական փառավոր ավանդներ ունեցող գիտական կենտրոնների առկայության պայմաններում, մենք չունենք հանրամատչելի վերլուծություններ Արեգակնային բռնկումների, Երկիր մոլորակի մոտակա հարևանների մասին, որոնց վարքագծից անմիջական կախում ունի մեր բնակչության առողջությունը: Վերջին շրջանում տիեզերական տարօրինակ ակտիվության պատճառով ավելացել է սիրտ-անոթային հիվանդների քանակը, հատկապես մեր տարածքում և այդ հիվանդների շրջանում մահացության դեպքերը: Ով, եթե ոչ գիտնականն ու բժիշկը (որը նույնպես գիտնական է) պետք է մարդկանց զգուշացնի այդ երևույթների անցանկալի հետևանքները նվազագույնի հասցնելու միջոցների մասին, նվազագույնի հասցնելով վտանգը:



ՄՏՈՐՈՒՄԵԵՐ

Վերջերս հաճախ եմ հիշում «Միմինո» կինոնկարում դիլիջանցի բեռնատարի վարորդ Խաչիկյանի դերակատար Մեր Մկրտչյանի դատարանի դահլիճում ասած խոսքերը. - «Աստված իմ, էս ի՞նչ ա կատարվում...»:

«Աստված իմ, էս ի՞նչ ա կատարվում...»

Ոչ-ոչ, խոսքը Մոսկվայի ու մոսկովյան դատարանի մասին չէ, այլ Հայաստանի մասին է, մեր մասին:

Օրինակ, մի՞թե անարդար չէ, որ մինչև հիմա Գինեսի ռեկորդների գրքում չկա հայերի անունը: Մի մոտավորապես հաշվենք, թե վերջին 10 տարում քանի-քանի նախադեպը չունեցող «ռեկորդների» հեղինակ ենք դարձել մենք: Եվ եթե այդ հանձնաժողովը կողմնակալ ու խտրական վերաբերմունք չունենար մեր նկատմամբ, ապա գոնե տարին մեկ մեր անունը պիտի գրանցվեր այդ գրքում: Խոսենք փաստերով. երբ 90-ական թվականների սկզբում 2-3 տարի ապրեցինք քաղցի, ցրտի ու անթափանց խավարի մեջ... ու դիմացանք, արևմուտքում ո՛չ զարմացան և ո՛չ էլ համապատասխան վերաբերմունքի արժանացրին: Հետո իրար հետևից անցկացրինք «շատ» թափանցիկ և «շատ» ժողովրդավարական ու «արդար» ընտրությունների մի ամբողջ շարք: Էլի անտեսվեցինք:

Օրը ցերեկով գնդակահարվեց կառավարությունն ու Ազգային ժողովը՝ և նորից անարձագանք: Նույնիսկ չէին զարմանում: Մինչդեռ զարմանալու բան կար: Հենց թեկուզ այն, որ ահաբեկչություն իրականացնողների դատավարությունը տարիներով շարունակվում է, հա շարունակվում և՝ անպտուղ: Իսկ հայ ժողովրդին հավերժական խավարի մատնած և անդառնալի վնասներ պատճառած չարագործներից ոչ մեկը չպատժվեց: Ավելին, այդ դավադիր գործարքի գլխավոր հեղինակներից մեկին վստահեցին Հայոց աշխարհի ջրային ողջ պաշարների տնօրինությունը: Անսահմանափակ իրավունքներ ունի. ուզում է՝ անջատում է ոռոգման ջրերը, կուզի՝ կփակի խմելու ջուրը կամ կաղտոտի: Սպառնալից ելույթներ է ունենում՝ իմացե՛ք, հա, խմելու ջուրը պետք է թանկացնեմ: Ըստ երևույթին Հերոստրատի փառքը հանգիստ չի տալիս այս պարոնին: Մի արտառոց «ռեկորդը» ժամանակին չգնահատեցին, հիմա որոշել է սահմանել նոր «ռեկորդ», ջրի գինը այնքան բարձրացնի, որ հայ մարդը վախենա մոտենալ ծորակներին՝ պարբերաբար լողանալու, լվացք անելու, տանը, կենցաղում մաքրություն, հիգիենա ապահովելու նպատակով, քանզի կրակի գին դարձած ջուրը կամաց-կամաց դառնում է անհասանելի շռայլություն: Ուրեմն ի՞նչ, մի քանի հարյուր համբուրգեր լափողը կարող է մտնել Գինեսի գիրք, իսկ ժողովրդի համար իր երկրի, իր հողի, իր հայրենիքի Աստծո պարգևած ջուրը տաբու սարքող պարոնը անտեսվում է: Բա եղա՞վ, բա սա արդարությո՞ւն է: Բա չասե՞ս, էս ի՞նչ ա կատարվում:

Իսկ կատարվում է այն, որ Հայաստանի Ազգային ժողովը իր օրակարգում քննարկում է գազի, ջրի, էլեկտրաէներգիայի սակագների թանկացման, կառավարության ծրագիրը և... պարզվում է, որ որևէ որոշում կայացնելու իրավունք չունի: Ի՞նչ անուն տալ սրան. պարոն ընտրյալներ, ինչո՞ւ եք խոսում, զայրանում, առաջարկություններ անում, հուզվում և քննարկում, երբ ընդամենը տեղյակ են պահում ձեզ, որ հարցը պատգամավորներին է ներկայացված ընդամենը ի գիտություն: Մի՞թե արտառոց չէ, և դրանով իսկ՝ գինեսյան ռեկորդ: Ինչպես Պարոնյանը կասեր՝ «Հարցը ձեզմեն դուրս ելած է»:

Չգիտեմ ինչպես է կոչվում կրթության օպտիմիզացիայի թե օպտիմիլացման ծրագիր, սակայն որ այն ուղղված է դպրոցի հետագա ավերմանը, միանշանակ է: Է՛լ երկլեզվյան կամ երեքլեզվյան ուսուցման փորձ, է՛լ ուսուցիչների շարունակական կրճատում, է՛լ դրույքաժամերի ավելացում և դասարաններում աշակերտների թիվը սահմանել 50 աշակերտ: Նախարարը դրա փոխարեն խոստանում է ավելացնել աշխատավարձերը: Նա մոռանում է, որ դաս պարապելը 50 աշակերտի հետ և նրանց գիտելիքներ տալն ու դաստիարակելը ամբոխի առջև պոպուլիստական ելույթ ունենալ չէ, որ 50 հոգիանոց դասարանի գաղափարը ուղղակի անհեթեթություն է:

Հայտնի բան է՝ ինչքան երևույթը արտառոց է, այնքան մեծ է նրա հավակնությունը՝ արժանանալու Գինեսի ռեկորդին: Եվ մեզ մոտ ջանում քանի վիճակախաղ, լոտո և խաղարկություն կա: Էլ «ընտանեկան» ու «զառ», էլ «բարի ակնթարթ», էլ «շահող միլիոն» ու «շահող ավտոմեքենա», էլ «գանձարան», էլ «շահող լոտո» ու «Դոմինո», էլ «Բլոտ», էլ «պրիմիեր», «պոպուլինո», «խցան», «լիբիզ», «ավտոակնթարթ», «շահող մեքենա» եկ չգիտես էլի ինչ:

- Ձնջե՛ք և շահե՛ք, բոլո՛րը շահում են, լավագույն լոտոն աշխարհում,- այս խոստումներով լի է հեռուստաէկրանը:

Շահողների հետ բռնահարցազրույցները, մի քնձոոտ ժիգուլու համար շրջանի մակարդակով կազմակերպված միտինգները, ելույթները, աղ ու հացը, զանգվածային հրճվանքը վիրավորական, նվաստացնող են մեր ժողովրդի համար, քստմնելի ծաղր:

Եվ սույն գովազդները (ո՞ւմ գրպանից են վճարվում այդ ահռելի գումարները) այնքա՜ն անհաշիվ են, այնքա՜ն են կրկնվում, որ մոսկովյան հեռուստաալիքները հնարավոր չէ նայել՝ կտրում-ընդհատում են՝ ինֆորմացիան, համերգը, կինոնկարը, հաղորդումը՝ միայն թե իրենց լոտոն ու վիճակախաղը գովազդեն: Այդ գովազդներից փրկության հնար չկա: Դրանք ականջներիդ, բնակարանիդ մեջ են ողջ օրը՝ գիշեր-ցերեկ:

Այն, որ այլ ալիքներն ընդհատելը և ընդմիջելը պարզապես անբարո է և անթույլատրելի, հայտնի է բոլորին: Սակայն սույն մարտնչող «լոտոների» տրամադրած գումարները երևի շատ են գայթակղիչ հայկական ալիքների համար:

Ասում են, որ վիճակախաղի միջոցով Ֆրանսիայի Լյուդովիկոսներից մեկը լցրել է իր դատարկված գանձարանը՝ միջազգային մակարդակի մի ավանտյուրիստի խորհրդով:

Հայաստանում լցված այս լոտոների, վիճակախաղերի նկատմամբ օրինավոր հսկողություն չկա, և դրանց կազմակերպիչները ազատ ու անկաշկանդ գործում ու հարստանում են, փողեր են «լվացվում», հնացած ապրանքներ իրացվում:

Հիմա Հայաստանում արդեն ամեն օր հայտնվում են նոր «լոտոներ» ու «վիճակախաղեր», որոնք իրարից առաջ անցնելով հրապուրում, գայթակղում են միամիտ քաղաքացուն. 25 ավտոմեքենա, ջիպ, 40 ավտոմեքենա, 54 ավտոմեքենա, 50 «Նիվա», 100.000 դոլար, միլիոն, հազարավոր.սառնարաններ, հեռուստացույցներ, փոշեկուլներ, հարիչներ, շվեյցարական մաքուր ոսկի և այլն և այլն: Դե, արի ու դիմացիր...

Սրանց մեջ, անտարակույս, ամենահարձակողականը «ընտանեկան լոտոն» է, որի շոումենը շատ է սիրում հեռուստաաստղ խաղալ, և նրա դեմքը երբեք չի հեռանում էկրանից:

Օրերս սույն պարոնը հնարել է նոր վիճակախաղ, որ կոչվում է «հատուկ մոտեցում ընտանեկան բյուջեին»: Նոր վիճակախաղը, պետք է ենթադրել, ստեղծվել է կառավարության աղքատության վերացման ծրագրի շրջանակներում: Որովհետև խոստանում է արմատապես բարելավել հայերի ընտանեկան բյուջեն: Ընդամենը պետք է «ընտանեկան բյուջե» վիճակախաղ գնել: Եվ ամեն չորեքշաբթի սույն պարոնը մեզ է հրամցնում իր «շոուն», որոնց մասնակիցները ի լուր ամենքի ասում են.

- Բանգլադեշի շուկայում առամ ընտանեկան լոտոյի տոմսերը. շահեցիմ 25 հազար դրամ, շատ ուրախացամ, տարոսը ձեզ...

Երբ գրվում էին այս տողերը, «բարի լոտոն» երկու անգամ ավելարցեց իր մեքենաների թիվը (54), պատասխանը չուշացավ: «Ընտանեկան լոտոն» թե «զառը» հայտարարեց՝ «Մենք չենք կրկնում մեզ, չենք էլ կրկնապատկում, այլ եռապատկում ենք մեր ավտոմեքենաների թիվը՝ խաղարկվում է 80 ավտոմեքենա»: Բա՜... Հիմա տեսնենք ո՞վ ավելի շատ: Կար ժամանակ, երբ «դուշ-գիր» և «զառ» խաղացողներին քրեորեն հետապնդում էին: Հիմա ազատ շուկա է, և մի խումբ աճպարարներ «դուշ-գիր» և «զառ» են խաբում մի ողջ ժողովրդի հետ ու խաբում-խաբում: Եվ այս «լոտոյական» ահաբեկչության վերջը չի երևում:

- Աստված իմ, էս ի՞նչ է կատարվում...

Սիրելի ընթերցող, տեղեկացնենք, որ մեր այս հարցը զուտ հռետորական է, որովհետև դրա պատասխանն ակնկալելը մեզ շատ հեռուն կտաներ...

Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Համո ՍԱՀՅԱՆ

Ուր որ նայում եմ

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,
Քարե արցունք է, քարե ժպիտ,
Քարե սարսուռ է ու քարե սունկ է,
Քարե ծաղկունքի բնքշանք է բիրտ:

Քարերի վրա քարե վազրեր են,
Ուր-որ է պիտի պատռեն իրար,
Քարե երդեր են, քարե վանքեր են,
Քարե հավքեր են քիվերն ի վար:

Քարե մրրիկ է ու քարե բուք է,
Քարե բողոք է ու քարե բերդ,
Քարե շեփոր է, քարե թմբուկ է,
Քարե քափոր է, քարերի երգ...

Քարե ընդվզում, քարե տանջանք է,
Քարե ավար է, առևանգում...
Քարե զարմանք է ու զարհուրանք է,
Քարե քռիչք է, քարե անկում:

Քարե ամպրոպ է ու ծիածան է,
Քարե լծկան է ու քարե մաճ,
Քարե մագաղաթ, քարե մատյան է,
Քարե խորհուրդ է ու քարե խաչ:

Մեր բաժին Աստված, քո սիրտն
էլ քար է,
Որ մեզ քարերը տվիր նվեր,
Բայց քո կյանքը կարճ, մերը
երկար է,
Որ երկարում է քարերն ի վեր...

1970

Շափ-շափ հին է և հարթ

Կան բաներ, որոնց գիտակցումն ու ընկալելը մարդկային ուղեղի կողմից չափազանց բարդ է, եթե չասենք՝ գրեթե անհնար: Օրինակ՝ տիեզերքի անսահմանությունը: Սկիզբը կա, իսկ վերջը՝ չկա, որտե՞ղ է այն՝ ոչ մի տե՞ղ:

Կամ, ասենք, ինչ- ո՞ր ժամանակ, շատ-շատ վաղուց տեղի է ունեցել մեծ պայթյուն, որի արդյունքում էլ ծնավորվել է ամեն ինչ՝ աստղերը, մոլորակները, մենք և այլն: Իսկ մինչև այդ պայթյունը ընդհանրապես ոչինչ չի եղել՝ ոչ մի տեղ, ոչ մի ժամանակ: Բա ի՞նչ է եղել: Եթե երկար մտածես այդ հանելուկային առեղծվածների մասին՝ կարելի է և ցնորվել:

Եվ այնուամենայնիվ, կան մարդիկ, որոնք մշտապես մտածում են այդ մասին, նրանց գործը, մասնագիտությունն է դա: Եվ ահա նրանցից մի խումբը, որ աշխատում է ՆԱՍԱ-ում (ԱՄՆ-ի Տիեզերական հետազոտությունների կենտրոն) 2001 թվականի հուլիսին տիեզերք ուղարկեց MAP անվանումով մի սարք, որը ամբողջ մեկ տարի, գտնվելով Երկրից 1,5 միլիոն կիլոմետր հեռավորության վրա, գրանցեց, արձանագրեց տիեզերական միկրոալիքային ֆոնի ցուցանիշները: Ասենք, որ տիեզերական միկրոալիքային ֆոնը բրածո էլեկտրամագնիսական ճառագայթում է, այլ խոսքով՝ ամենա-ամենա հին լույսը:

Ահա թե ինչու այն արտացոլում է այն անհիշելի ժամանակները, երբ չեն եղել գալակտիկաները, աստղերը, մոլորակները, ոչինչ չի եղել...: ԱՄՆ-ի Տիեզերական հետազոտությունների կենտրոնի մասնագետներին ամբողջ մեկ տարի պետք եղավ հավաքված տվյալները վերլուծելու և հետազոտելու համար: Եվ ահա, վերջերս, վերջապես հրապարակվեցին հետազոտությունների արդյունքները, որոնք մեզ հայտնի դարձրին տիեզերքի տարիքը՝ (մեկ-երկու հարյուր միլիոն տարվա ճշտությամբ) 13,7 միլիարդ տարի է:

Հետազոտությունների արդյունքները օգնեցին նաև գիտնականներին վերջնականապես կողմնորոշվելու Տիեզերքի ձևի հարցում: Տիեզերքը հարթ է, տափակ: Ի դեպ, ի պատիվ գիտնականների, ասենք, որ նրանք այդպես էին ենթադրում նաև առաջներում:

Եվ երրորդ, այժմ արդեն միանգամայն ճշգրիտ հայտնի դարձավ, որ այն ամենը, ինչ մենք սովոր էինք ընդգրկել «մատերիա» հասկացության մեջ, տիեզերքում կազմում է ընդամենը 4 տոկոս: Եվս 23 տոկոս բաժին է ընկնում այսպես կոչված «մութ մատերիային»: Ասենք, որ սրա վերաբերյալ գիտնականների պատկերացումները չափազանց աղոտ են: Մնացած 73 տոկոսը բաժին է ընկնում այսպես կոչված «մութ էներգիային»: Վերջինս ինչ որ հակագրավիտացիոն ուժ է, որը ներգործում է հեռավոր օբյեկտների վրա և ստիպում է տիեզերքին՝ անընդհատ լայնանալ ու ընդարձակվել: Ի՞նչ ուժ է սա, առայժմ նույնպես այնքան էլ պարզ չէ: Սակայն այդ հայտնագործությունը հիմք է տալիս միանշանակ և հաստատ եզրակացնելու, որ Տիեզերքը այլևս երբեք սեղմվել չի կարող:

ՑԱՎՈՎ ԺՊԻՏ

Հայկական կապիտալիզմ. մասնավոր սեփականություն՝ պլյուս հեռուստատեսության լոտոֆիկացիա

Ընտանեկան լոտոյի «Նկուղային հարկ» մասնաճյուղը հայտնում է, որ եթե դուք նկուղային հարկում շահեք երեք՝ 1, երեք՝ 9 և երեք՝ 99 թվերը, կարող եք մասնակցել նկուղից վեր բարձրացող «վերի աստիճաններ» խաղարկությանը, որտեղ խաղարկվում է 70 ավտոմեքենա: Դրա համար անհրաժեշտ է նկուղից վեր բարձրանալ 70 աստիճան (ամեն աստիճանում խաղարկվում է մեկ ավտոմեքենա): Եթե ձեր նկուղը չունի 70 աստիճան, ոչինչ, դուք պահեք ձեր տոմսը, գուցե բախտը ձեզ ժպտա հաջորդ փուլում: Այդ փուլում, որը կոչվում է «Ձեղնահարկ-2», խաղարկվում է շուրջ 2 հազար շահում՝ մեկից 2000 դրամ արժեքով: Այստեղ դուք կունենաք շահելու բացառիկ հնարավորություն:

Օգտվեք այդ հնարավորությունից և գցեք ձեր զառը, մի վախեցեք ոստիկանությունից, նա այլևս զառ խաղալու համար մարդկանց չի ձերբակալում, իսկ հարկ եղած դեպքում ինքն էլ ձեզ հետ զառ կխաղա...

Դեռ չէր հրապարակվել մեր այս հայտարարությունը, երբ հնչեցին մեր ընթերցողների հեռաձայները: Նրանցից շատերը նշում էին, որ դեռ չի սկսվել խաղարկությունը, իսկ իրենք արդեն շահել են: Այսպես. Արմավիրից զանգեց Կարոն և հաղորդեց.

- Գնում էի տուն, մեկ էլ կանգ առա: Ի՞նչ է պատահել, Կարո՛... Ասես մեկը հարցրեց ինձ: Հետո տեսամ «Ձեղնահարկ» լոտոն են ծախում, ես էլ շինարարություն եմ անում ու ձեղնահարկս կիսատ է մնացել: Ասի՝ առնեմ: Առա, ջնջեցի ու շահեցի ավտոմեքենա: Տեղնուտեղը ծախեցի ու էդ փողով ձեղնահարկս կառուցեցի, թե չէ 1-ին և 2-րդ հարկերը օդում կախված էին մնացել...

Ահա և մեկ այլ նամակ, գրում է Շիրակից Ալեկը.

- Հարգելի հարկաբաժին, կյանքումս բան չեմ շահե: Ասի՝ առնեմ, Առա,շահեցի: Էրգար արև լոդոյի հեղինակներին: Տոմսը չեմ գցե, երբ նոր խաղարկություն էղնի, նորից կստուգեմ, մեկ էլ տեսար էլի շահեցի:

Ինչ եք նստե տներդ, հելեք լոդո առեք, լոդո՛... էդ է փրկությունը, մեր ազգի ապագան...

Ընտանեկան լոտոն և «Զառ-3», «Նկուղ-17», «Ձեղնահարկ», «Աստիճան» և այլ մասնաճյուղեր ձեզ են սպասում:



ՄԵՆՔ ՕԳՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՏԵՆ.

BRITICH CONCIL ARMENIA

ՀՀ ԳԱԱ նախագահության միջնորդությունների շնորհիվ «Գիտություն» թերթը 2004 թվականին կհրատարակվի կանոնավոր: Սակայն այս հարցի լուծումը կախված է ձեզանից, եթե Դուք բաժանորդագրվեք թերթին: Մեկ տարվա բաժնեգինն է 2400 դրամ: Շնորհակալ կլինեինք, եթե դուք բաժանորդագրվեք 20 օրինակ և բաժնեգինը կանխիկ վճարեք խմբագրությանը կամ փոխանցեք հետևյալ հասցեով՝ Զարգացման հայկական բանկ, հաշիվ՝ 18100-52001573345, «Գիտություն» թերթի խմբագրություն:

«Գիտություն» թերթի խմբագրություն

«Մարդիկ մեր բարեկամներն են»

Թաղամասում շունը ձագեր բերեց, իսկ ահա Ռուսական հեռուստատեսությամբ երկրի պրեզիդենտ Վ. Վ. Պուտինը իր հեռուստամարաթոնի ընթացքում շատ-շատ կարևոր այլ հարցերի շարքում պատմեց իր շան մասին, որը քոթոթներ է բերել: Զուգադիպություն է, թե ոչ, չգիտեմ մեր թաղամասում էլ շունը ձագեր բերեց: Մեր թաղամասի բնակիչները մեծ ջանասիրությամբ բույն սարքեցին, փալասներ փռեցին, ափսե դրեցին մայր շան համար ու սկսեցին կերակրել ընտանիքին: Զարմանալի է կենդանիների աշխարհը: Ընտանիքի հայրը արթուն պահապանի պես հսկում էր ձագուկներին, իսկ մայրը սնունդ էր հայթայթում իր համար. հետո, երբ ձագուկների ատամները հայտնվեցին, նաև ձագուկների համար: Դա մեր բակում էր, իսկ թաղամասո՞ւմ: Վերջապես մեր քաղաքում օրական քանի-քանի շուն է ծնվում: Դրանցից շատերը ընկնում են կենդանիների շուկա, իսկ մյուսները գրավում են փողոցներն ու աղբարկղերը և աճում, բազմանում կեղտի մեջ: Մարդիկ, որ խնամքով կերակրում էին նրանց, քանի դեռ ձագուկներ էին, հիմա նրանց քշում են, քարկոծում, հաճախ նաև հաշմանդամ դարձնում:

Խստաբարո ընթերցողը կասի՝ մարդիկ ապրելու միջոց չունեն, սրանք շների մասին են մտածում: Ո՛չ, պարոններ, մենք դարձյալ մարդու մասին ենք մտածում, քանզի թափառական շունն ավելի վտանգավոր է, քան հոգատարության արժանացած շունը: Ուրեմն՝ ինչ անենք: Առաջին հերթին պետք է մշակել մեր քաղաքում կենդանիներ պահելու կարգավիճակ: Դավթաշենի կանաչ տարածքներում կովեր են արածեցնում, կաթ տվող, աշխատող կենդանիների կարելի է հանդիպել մայրաքաղաքի բոլոր կանաչ տարածքներում, իսկ շներին՝ քարկոծում են, քանզի վերջիններս կաթ չեն տալիս: Իսկ նրանք մեր քաղաքի յուրահատուկ սանիտարներ են: Իհարկե, փողոցային շների որոշ տեսակներ ու որոշակի քանակ կարող է և հոգս դառնալ բնակիչների համար. իսկ ի՞նչ է, մեր քաղաքում կա՞ն թափառող շների գիշերօթիկներ, որտեղից մարդիկ կարողանան գնել նրանց և ընտելացնել, կտրել փողոցից ու աղբարկղներից:

Եզակի չեն մարդիկ, ովքեր տներում պահում են գիշատիչ կենդանիներ, թռչուններ և նույնիսկ... առնետներ: Իսկ կենդանական աշխարհից մարդու հետ բարեկամացած միակ ներկայացուցիչը՝ շունը, մոռացվել է մարդու կողմից ու մնացել փողոցում: Արդարացված չէ այդ վիճակը, մարդի՛կ...

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14:

Դասիչ՝ 69268,
գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝
30.12.2003թ.

"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

թերթը հրատարակվում է հովանավորչական միջոցներով: